# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 40 (1290) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 11, 2006
VOLUME 26, NO. 40 (1290) SATURDAY, NOVEMBER 11, 2006

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### «ԱՆՈՒՆԸ ԿԱՅ ԻՆՔԸ ՉԿԱՅ»

*ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ*

Կիրակի, Նոյեմբեր 4-ին կախաղանով մահուան վճիռ տրուեցաւ Սատտամ Հիւսէյնին:

Մահմետական շիաներն ու քիւրտերը բացայայտօրէն իրենց ուրախութիւնը յայտնեցին:

Սիւննիները դաւադրութիւն տեսան արձակուած վճռին մէջ:

Եթէ երկրի Վճռաբեկ Ատեանը հաստատէ վճիռը, Իրաքի երբեմնի հզօր բռնակալը պիտի կախաղան բարձրանայ 30 օրէն:

Անակնկալ մը չէ Սատտամի բռնատիրական իշխանութեան շրջանի ոճրագործութիւններէն ձերբազատուած, ու շնորհիւ ԱՄՆ-ի ներխուժումով երկրի գերագոյն դիրքերու հասած շիա զանգուածներու զոհունակութիւնը:

Նոյնպէս, անակնկալ մը չէին երբեմնի հիւսէնեան դաժան տիրակալութեան հովանաւորութիւնը վայելած ու ԱՄՆ-ի ներխուժումէն ետք աճցանի մէջ առնուած վիրաւոր արժանապատուութեամբ սիւննիներու դժգոհութիւնն ու զայրոյթը:

Իսկ միջ-կրօնական (շիա, սիւննի), քաղաքականօրէն եւ կրօնականօրէն երկփեղկուած իրաքի ժողովուրդը ոչ միայն չկարողացաւ դուրս գալ իրեն պարտադրուած փապուղիէն, ընդհակառակը՝ աւելի մխրճուեցաւ իր ներքին հակասութիւններուն մէջ: Երկիրը առաջնորդուեցաւ ահաբեկչական բնոյթի զզուելի քաղաքացիական պատերազմի մը, որ օրը նոր՝ տասնեակներով նո՛ր զոհեր թողուց իր ետին: Նոր քանդումներ յառաջացուց եւ մռայլ ամպեր կուտակեց ամէն այգաբացին: Սատտամի դէմ առնուած վճիռն ու անոր գործադրութիւնը ու՞ր կրնան առաջնորդել արդէն իսկ ինքնիր մէջ բզկտուած Իրաքը՝ Աստուած գիտէ:

Ի հեճուկս միջազգային քաղաքական շրջանակներուն, ԱՄՆ-ի նախագահ Ճորճ Պուշ «կարեւոր յաջողութիւն մը» նկատեց առնուած մահուան վճիռը: «Անկիւնադարձային շրջադարձ մը»՝ իրաքի ժողովուրդի կեանքին մէջ: «Հիմնական յանդգնութիւն»՝ որ պիտի գար օգնելու «բռնատիրութիւնը փոխարինելու օրէնքի իշխանութեամբ»: Այս մէկը կը բացատրուի ժողովրդավարութեամբ՝ որ անշուշտ բոլորին ցանկութիւնն ըլլալով հանդերձ, անունը կայ, ինքը չկայ:

Հոկտեմբեր 2005-էն 4 Նոյեմբեր 2006-ը երկարած դատավարութիւնը, ի սկզբանէ, ԱՄՆ-ի Նոյեմբերի ընտրական խաղերուն յարմարեցուած եւ լաւապէս բեմադրուած դատավարութիւն կը նկատուի:

Համաձայն Միջազգային Արդարադատութեան Կեդրոնի Վարիչ Միրանդա Սիսոնի գնահատութեան, նաեւ, ԱՄՆ-ի քաղաքական շրջանակներու կատարած հաստատումնե-

*Շար.ը էջ 4*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

# «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ»-Ը ԿԸ ՊԱՀԱՆՋԷ ԴԱԴՐԵՑՆԵԼ «ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐ» ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

*Միջազգային երկու հեղինակաւոր կազմակերպութիւններ վերջին օրերուն հանդէս եկան Հայաստանի իշխանութիւններու հասցէին խիստ քննադատական դիրքորոշումներով, աւելի եւս հեղինակազրկելով քոչարեանական բռնատիրական իշխանութիւնը:*

*Ազատութեան Տուն (Freedom House) իրաւապաշտպան կազմակերպութիւնն կոչ ըրաւ «Հազարամեակի Մարտահրաւէրներ» ընկերակցութեան, դադարեցնելու օգնութեան տրամադրումը Հայաստանին՝ քաղաքական իրաւունքներու եւ քաղաքացիական ազատութիւններու պաշտպանութիւնը չապահովելու պատճառով:*

*«Նոյեմբեր 8-ին «Հազարամեակի Մարտահրաւէրներ» ընկերակցութեան տնօրէններու խորհուրդը պէտք է ընտրէ այն կառավարութիւնները, որոնք կրնան դիմել 2007 Թուականին օգնութիւն ստանալու համար: Ազատութեան Տունը կոչ կ՚ընէ ընկերակցութեան շրջանցել այն երկիրները, որոնք ցած գնահատականներ ունին քաղաքական իրաւունքներու եւ քաղաքացիական ազատութիւններու բնագաւառէն ներս»,- ըսուած է Ազատութեան Տունի յայտարարութեան մէջ: Կազմակերպութեան կողմէ առանձնացուած երկիրներն են՝ Հայաստան, Բութան, Եգիպտոս, Յորդանան, Մալդիվեան կղզիներ, Թունիզը եւ Վիեթնամ:*

*Այս տարուայ Սեպտեմբերին Հայաստանի մէջ պաշտօնապէս մեկնարկեց «Հազարամեակի Մարտահրաւէրներ» ծրագիրը, որով Ամերիկայի Միացեալ Նահանգները յառաջիկայ հինգ տարուայ ընթացքին Հայաստանի պիտի յատկացնէ 235 միլիոն տոլար՝ գլխաւորաբար գիւղական շրջաններու զարգացման համար:*

*Ազատութեան Տուն-ը կը յայտարարէ որ, Ընկերութիւնը ուշադրութեամբ պէտք է հետեւի Հայաստանի նման երկիրներուն, որոնց հետ համաձայնագիրեր կնքուած են, բայց որոնք չեն ապահովէր յանձնառու եղած չափանիշերը՝ ժողովրդավարական կառավարման բնագաւառէն ներս:*

*Ըստ իրաւապաշտպան կազմակերպութեան, Հայաստան կարեւոր փորձաքար է, քանի որ ստորագրելէ ետք համաձայնագիրը, հետընթաց արձանագրած է խոստացած բարեփոխումները իրագործելու առումով:*

*«Հայաստան չէ կատարած Ընկերակցութեան տուած իր խոստումը՝ բարելաւել հաւատարմութիւնը ժողովրդավարութեան եւ հանդուրժողականութիւնը ընդդիմութեան հանդէպ: Հակառակ Ընկերակցութեան գլխաւոր գործադիր պաշտօնեայ, դեսպան Դանիլովիչի կոչերուն՝ 2005 Թուականի Նոյեմբերի սահմանադրական հանրաքուէի ժամանակ թոյլ տուած խախտումները չեն հետաքննուած: Հանրաքուէով հաստատուած երկչոտ բարեփոխումներու կենսագործումը 2006 Թուականին կանգ առած է, եւ ընդդիմութեան կարծիքով, յառաջիկայ ընտրութիւնները կրկին պիտի ընթանան խախտումներով: Բազմաթիւ հակաժողովրդավարական միջոցներ կը կիրառուին իշխանութիւնը պահելու համար: Դատական ճիւղը կը մնայ գործադիր ճիւղի կողմէ քաղաքական ճնշման առարկայ: Հակառակ որ նոր օրէնսդրութիւն ընդունուած է լրատուամիջոցներու անկախութիւնը ապահովելու նպատակով, մթնոլորտը լրա-*

*Շար.ը էջ 4*

## ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԸ $4.5 ՄԻԼԻՈՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ ԼԻԲԱՆԱՆԻ ԲՈԼՈՐ 28 ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

*Շնորհիւ Լինսի Հիմնարկէն ստացուած բացառիկ յատկացման մը, Միացեալ Հայկական Ֆոնտը $4.5 միլիոն կը նուիրէ Լիբանանի բոլոր 28 հայկական վարժարաններուն:*

*Սոյն նուիրատուութեան դրդապատճառն էր Լիբանանի վերջին տարիներու տնտեսական տագնապը, որ աւելի եւս սաստկացաւ անցեալ ամրան ընթացքին երկրին դէմ կատարուած աւերիչ յարձակման հետեւանքով: Արդարեւ, հազարաւոր կարիքաւոր հայ ընտանիքներ ի վիճակի չէին վճարելու կրթաթոշակը հայկական դպրոց յաճախող իրենց զաւակներուն: Հետեւաբար հայկական վարժարաններու մեծ մասը կարող չէր վճարելու ուսուցիչներու եւ այլ պաշտօնեաներու աշխատավարձքը:*

*Միացեալ Հայկական Ֆոնտի նուիրատուութիւնը պիտի ծառայէ երեք գլխաւոր նպատակներու.*

*1) $3.2 միլիոն՝ վճարելու համար ամբողջական կամ մասնակի կրթաթոշակը 5,092 կարիքաւոր ուսանողներու, որոնք կը ներկայացնեն գրեթէ 75 տոկոսը 2006-2007 տարեշրջանին լիբանանահայ բոլոր 28 վարժարաններուն մէջ արձանագրուած 7,029 աշակերտներուն:*

*2) $757,000 վճարելու համար 536 ուսուցիչներու եւ այլ պաշտօնեաներու աշխատավարձքերը, որոնք անցեալ տարեշրջանէն ի վեր անհատոյց մնացած են շատ մը վարժարաններու պարագային:*

*3) $513,000 հոգալու համար այս դպրոցներու զանազան կարիքները:*

*Յարութ Սասունեան, Միացեալ Հայկական Ֆոնտի նախագահը, ներկայիս Լիբանան կը գտնուի՝ այցելելու համար բոլոր 28 հայկական վարժարանները, տեսակցելու անոնց տնօրէններուն եւ ուսումնական խորհուրդներուն հետ, եւ անձնապէս փոխանցելու իւրաքանչիւր վարժարանի համար նախատեսուած գումարը:*

*«Միացեալ Հայկական Ֆոնտի նուիրատուութիւնը կը կատարուի Լիբանանի բոլոր հայկական վարժարաններուն անխտիր», յայտնեց Սասունեան:*

*Նիւթական նպաստ ստացող կրթական հաստատութիւնները հետեւեալներն են՝*

*Ինը Ազգային Վարժարաններ՝ Սոֆիա Յակոբեան Գոլէճ, Յառաջ*

*Շար.ը էջ 19*

## ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ ԴԱՐՁԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ

*Նոյեմբեր 7-ին Ամերիկայի տարածքին տեղի ունեցած ընտրութիւններու լոյսին տակ, Դեմոկրատ կուսակցութիւնը դարձաւ մեծամասնութիւն գրաւելով Ներկայացուցիչներու Տունը եւ շատ հաւանաբար նաեւ Ծերակոյտը: Դեմոկրատները մեծ յաջողութիւններ արձանագրեցին նաեւ նահանգապետերու ընտրութիւններուն:*

*Այս ընտրութիւնները նկատուեցան հանրաքուէ՝ նախագահ Ճորճ Պուշի վարած քաղաքականութեան, յատկապէս Իրաքի պատերազմի կապակցութեամբ: Ամերիկացի ժողովուրդը վերջին ամիսներուն սկսած էր կորսնցնել իր հաւաքը Իրաքի մէջ խաղաղութիւն հաստատելու եւ ամերիկեան զօրքերը տուն բերելու հարցով:*

*Ներկայացուցիչներու Տունը 1994-էն ի վեր առաջին անգամ ըլլալով անցաւ Դեմոկրատներու ձեռքը, որոնց ղեկավար Նէնսի Փըլոսի պիտի դառնայ առաջին կին խօսնակը Ամերիկայի պատմութեան մէջ:*

*Ծերակոյտը եւս անցնելով Դեմոկրատ մեծամասնութեան, Պուշի վարչակարգը իր վերջին երկու տարիներու ընթացքին մեծ դժուարութիւններ պիտի դիմագրաւէ իր ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը առաջ մղելու համար:*

*Քալիֆորնիոյ մէջ կառավա-*

*Շար.ը էջ 4*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԻՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ 116-ԱՄԵԱՅ «ՊԱՊԻԿԻՆ»

*Հանրութեան համար այդպէս էլ անհասկանալի մնաց, թէ ինչու ձերբակալեցին Միասնական Ջաւախք ժողովրդավարական դաշինքի ղեկավար Վահագն Չախալեանին: Այդ ձերբակալութիւնն ունեցաւ տեսանելի մէկ դրսեւորում՝ աղմուկ: Թերեւս դժուար է կարծել, որ Հայաստանի իշխանութիւնն աղմուկի սիրահար է, կամ ունի դրա կարիքը: Հետեւաբար մեծ դիտողունակութիւն եւ ընկալունակութիւն պէտք չէ հասկանալու համար, որ ձերբակալութիւնն ունէր մէկ այլ, բոլորովին էլ չերեւացող պատճառ: Անշուշտ, պէտք է դիտարկել նաեւ ձերբակալութեան պաշտօնական պատճառը՝ Հայաստանի սահմանի անօրինական հատում: Բայց միայն այն, որ Հայաստանի ու Վրաստանի սահմանը դեռ նոր է միայն ճշդւում, արդէն իսկ որոշակիօրէն անտրամաբանական է դարձնում այդ ձեւակերպումը՝ թէ օրինական, թէ ապօրինի ճանապարհով չի կարելի հատել այն, ինչ դեռ չկայ: Դա էլ լրացուցիչ անգամ յուշում է, որ Չախալեանի դէպքը հասկանալու համար պէտք է դիտարկել եղածը:*

*«Ի սկզբանէ բանն» էր, իսկ բանը Փարւանայում էր: Ջաւախքում տեղի ունեցած ՏԻՄ ընտրութիւնից առաջ այնտեղ տեղի էր ունեցել ընթրիք Հայաստանի պաշտպանութեան նախարարի, Հայաստանի արտաքին գործերի նախարարի եւ ոչ պաշտօնական ու ոչ հրապարակային այցով Հայաստան այցելած Վրաստանի արտաքին գործերի նախարար Գելա Բեժուաշվիլու միջեւ: Ընթրիքը կազմակերպել էր Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը: Հետաքրքրական է, որ այդ ընթրիքին Հայաստանի արտգործնախարարը եղել է հրաւիրեալի կարգավիճակում: Այսինքն, նրա մասնակցութիւնը որոշուել է Սերժ Սարգսեանի կամքով, այսինքն, նա կարող էր եւ չհրաւիրել Վարդան Օսկանեանին ու Բեժուաշվիլու հետ ընթրել մենակ, առաւել եւս, որ Վարդան Օսկանեանն առանց հրաւէրի անգամ 100 տարի էլ կարող է ինքնուրոյն ընթրել: Բայց Սերժ Սարգսեանը հրաւիրել է: Ինչպէս յայտնի անեկդոտում, երբ Լենինի մօտ ընդունելութեան սպասող սոված մուժիկները տեսնում են միջանցքով անցնող Ձերժինսկուն կարագ-հաց ուտելիս: Նրանք խնդրում են թոյլ տալ գոնէ մի կտոր կծել այդ կարագ հացից: Ձերժինսկին հրամայում է լռել, սպառնալով կարագ-հացով հասցնել մուժիկների «քիթ մռութին»: Երբ դրանից վիրաւորուած մուժիկները բողոքում են Լենինին, յեղափոխութեան առաջնորդը ասում է՝ «բայց խղճով մարդ էր, չէ, Ֆելիքս Էդմունդովիչը, թէ չէ կարող էր հասցնել Ձեր քիթ ու մռութին»:*

*Կարող էր Սերժ Սարգսեանը չհրաւիրել Վարդան Օսկանեանին եւ գուցէ ճիշդ էլ կ՚աներ, որովհետեւ հէնց Վարդան Օսկանեանը բացայայտեց ՏԻՄ ընտրութեան շեմին հայ-վրացական յարաբերութիւնում Սերժ Սարգսեանի ներգրաւուածութեան մակարդակը, հրապարակելով ընթրիքի մասին տեղեկութիւնը, փաստօրէն մասնաւոր հացկերոյթը դարձնելով հանրութեան սեփականութիւն: Քաղաքացիական գիտակցութեան տեսանկիւնից Օսկանեանն իրաւացի էր՝ պետական պաշտօնեաների վարքի բոլոր դրսեւորումները պէտք է լինեն հրապարակային, բացի իհարկէ նեղ անձնականից: Սակայն Վարդան Մինասիչն իրականում թերեւս մտածում էր ոչ թէ քաղաքացիական հասարակութեան, այլ սեփական քաղաքական ճակատագրի մասին: Նրա բացայայտումը թերեւս ունէր երկու նպատակ: Նախ ցոյց տալ, որ Հայաստանում առկայ է սուբորդինացիոն խախտում՝ պաշտպանութեան նախարարն է յարաբերւում հարեւան երկրի արտգործնախարարի հետ, այն պարագայում, երբ սեփական երկրի ԱԳՆ-ն դեռ պաշտօնապէս գործող կառոյց է՝ պետական բիւջէի առանձին իր տողով, եւ բացի դա, Օսկանեանը ակնյայտօրէն ցանկացաւ դուրս գալ ստուերային հանդիպման մասնակցի կարգավիճակից: Թերեւս անկասկած է, որ Վարդան Մինասիչը տեղեակ էր հանդիպման թեմաներից, եթէ իհարկէ բացի ընթրիքից, մասնակցել է նաեւ զրոյցին: Հետեւաբար բացայայտելով հանդիպումը, Հայաստանի արտգործնախարարը փաստացի իր վրայից հանում է այդ հանդիպմանը ձեռք բերած որեւէ պայմանաւորուածութեան պատասխանատուութիւն, անգամ մասնակցութեան կարգով: Դա է վկայում նաեւ Վարդան Օսկանեանի հետագայ դիրքորոշումը Վահագն Չախալեանի գործունէութեան հանդէպ: Փաստօրէն Հայաստանում ձերբակալւում է օտարերկրեայ քաղաքացի, այն էլ ազգութեամբ հայ, իսկ արտգործնախարարը յայտարարում է, թէ այդ դէպքի մասին շատ քիչ բան գիտէ, որովհետեւ «քաղաքում չէր»: Մնում էր միայն ասել, որ հեռախօսն էլ նստած էր, իսկ մարտկոցի լիցքաւորիչը՝ տանը:*

*Հետաքրքրական է նաեւ, որ Չախալեանի դէպքի կապակցութեամբ լռեց այն քաղաքական ուժը (պաշտօնական անուանումը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութիւն), որի ձեռքից եթէ գայ, ապա Ջաւախքը հէնց վաղը կը հռչակի Հայաստանի մաս: Զարմանալի է, թէ ինչու այդ ուժը չընդվզեց իր հայրենիքի մի մասից միւսն անցած մարդու ձերբակալութեան դէմ: Միւս կողմից, դա կարող է ունենալ իր բացատրութիւնը, եթէ յիշենք, թէ 116 ամեայ «պապիկին» ինչ խորհուրդ տուեց երիտասարդ հանրապետական Արմէն Աշոտեանը, ասելով, թէ ՀՅԴ-ն ընտրութիւնից առաջ թող տապակուի իր դարդով: Թէեւ հայ աւանդական մտքի համար յեղափոխական մօտեցում է, երբ երիտասարդն է խորհուրդ տալիս տարեցին, բայց ՀՅԴ-ն թերեւս հէնց իրեն յատուկ յեղափոխականութեամբ էլ ընդունեց այդ խորհուրդը: Ինչ գործ ունեն Վահագն Չախալեանի հետ, եթէ նա Ջաւախքում իր 30 տոկոսը արդէն տարել է, մինչդեռ Դաշնակցութիւնը Հայրենիքում ապագայ խորհրդարանում իր համար չի կարողանում լուծել գոնէ դրա կէսի՝ 15 տոկոսի հարցը: Գուցէ առաջին հայեացքից այդ երկու հարցերը միմեանց հետ չեն առնչւում եւ կարելի էր զբաղուել թէ սեփական 15 տոկոսի եւ թէ Չախալեանի հարցով: Բայց առաջին հայեացքից ոչ միայն սէր չի լինում, այլ նաեւ քաղաքականութիւն: Իսկ Դաշնակցութիւնը քաղաքականութեանը նայում է աւելի քան մէկ դար ու արդէն հաստատ ինչ որ ձեւեր գիտի, որ չի զբաղւում երկու հարցով միաժամանակ:*

*Ինչ որ բան գիտէր նաեւ Չախալեանի ազատ արձակման որոշումից ընդամէնը երեք օր առաջ ասուլիս տուած Գառնիկ Իսագուլեանը: Ռոբերդ Քոչարեանի խորհրդականը յայտարարեց, թէ Չախալեանը ազատ կ՚արձակուի, ու բոլորը գոհ կը լինեն: Դա այն դէպքում, երբ Չախալեանի ազատ արձակման որոշումը պէտք է կայացնէր դատարանը: Հետեւաբար պէտք է ենթադրել, որ որոշումը կայացուել է աւելի վաղ եւ բոլորովին այլ մակարդակում: Իսկ եթէ ազատ արձակման որոշումը կայացուել է այլ, ոչ իրաւական մակարդակում, ապա միանգամայն հնարաւոր է, որ ձերբակալութեան որոշումը նոյնպէս իրաւական համակարգի հետ ունի ընդամէնը ֆորմալ առնչութիւն, այսինքն կայացուել է բոլորովին այլ մակարդակում: Խնդիրը միայն այն է, թէ արդեօք նոյն մակարդակում է որոշուել ձերբակալել, իսկ յետոյ ազատ արձակել: Դրանից յետոյ միայն կարելի է ասել՝այդ որոշումները կոմպլեմենտա՞ր են, այսինքն փոխլրացնող, թէ մէկը ձիու քայլ է անում, միւսն ի պատասխան փախցնում է նաւակը:*

***ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ***
***«ԼՐԱԳԻՐ»***

# ՀԵՐԹԱԿԱՆ ԽԱՐԴԱՒԱՆՔԸ

*Եթէ մի շարք քաղաքական եւ տնտեսական բնագաւառներում մեր այսօրուայ իշխանութիւնները թերացել են, ապա կարելի է վստահաբար ասել, որ խարդաւանքների, խօսք տանել-բերելու, բամբասանքներ տարածելու հարցում նրանք անգերազանցելի են՝ նրանց դէմ Մաքիավելին պարզապէս մանկապարտէզի երեխայ է: Նախնադարից յայտնի է, որ ինտելեկտի պակասութիւնը յաճախ փոխհատուցւում է խորամանկութեամբ, եւ խորամանկ տիրակալը կարող է հեշտութեամբ «փռացնել» մի քանի տասնեակ «բարձրաճակատների»:*

*Խորամանկութիւնը ենթադրում է մի շարք մակերեսային լուծումներ, որոնք ի վերջոյ նպաստում են իշխանութեան ամրապնդմանը: Ի՞նչն է աւելի հեշտ՝ նուազագոյն աշխատավարձը դարձնել, ասենք, 100 հազար դրա՞մ՝ մարդկանց արժանապատիւ կեանքն ապահովելու համար, թէ՞ անել այնպէս, որ իրական (ոչ արժանապատիւ) կեանքի մասին ոչ մի հեռուստապատկերութիւն չպատմի: Եթէ չես կարողանում «սանձել» իրականութիւնը, ապա «սանձում» ես այն արտացոլող հայելին: Կամ՝ ի՞նչն է հեշտ՝ ստեղծել կենսունակ քաղաքական համակա՞րգ, որտեղ մրցելու են ծրագրերն ու գաղափարները, թէ՞ խարդաւանքների միջոցով քանդել ընդդիմադիր կուսակցութիւնները, որպէսզի ընտրութիւնը կատարուի 2,5 իշխանամէտ խմբաւորումների միջեւ: Առաջինը ոչ միայն դժուար է, այլեւ իշխանութիւնների համար չափազանց ոչ ձեռնտու:*

*«Վերեւներում» նստած խարդաւանքները շատ լաւ գիտեն մարդկային մանր կրքերի՝ փողասիրութեան եւ փառամոլութեան ուժը, եւ այդ ուժը օգտագործում են կուսակցութիւններ քանդելու համար: Այդպէս են քանդուել Կոմունիստական Կուսակցութիւնը եւ ԱԺՄ-ն: Այդ կուսակցութիւնների պառակտումը լուրջ հարուած էր Հայաստանի քաղաքական համակարգի համար:*

*Հիմա հերթը հասել է, կարծես, Սահմանադրական Իրաւունք Միութեանը: «Հակամարտող» երկու կողմերի բացատրութիւնները թերի են եւ յստակ պատկերացում չեն տալիս այն մասին, թէ իրականում ինչ է կատարւում այս կուսակցութեան հետ եւ յատկապէս ինչը չեն կարողանում կիսել ՍԻՄ-ի նախկին եւ ներկայ ղեկավարները: Բայց նոյնիսկ չխորանալով այդ խնդիրների մէջ՝ կարելի է փաստել, որ նման իրավիճակը միանգամայն ձեռնտու է իշխանութիւններին, որոնք գործուն մասնակցութիւն են ունեցել դրա առաջացման եւ, հետեւաբար, կուսակցութեան վարկաբեկման մէջ:*

*Այդ ամէնին ես գուցէ եւ չէի անդրադառնայ, եթէ արդիւնքում հարուածի տակ չյայտնուէր «Իրաւունք» թերթը՝ անկախ Հայաստանի հնագոյն եւ ժողովրդականութիւն վայելող պարբերականներից մէկը: Անկեղծ ցանկութիւնս է, որ մեր գործընկերները կարողանան «Իրաւունքը» դուրս բերել այդ հարուածի տակից եւ ներկուսակցական բանավէճի մէջ չներառեն թերթի գործօնը: Դրանից կը շահեն բոլոր ընթերցողները եւ մեր մամուլն՝ ընդհանրապէս:*

***ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ***
***«ԱՌԱՒՕՏ»***

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

# ԲԱՆԱՎԻՃՈՒՄ ԷԻՆ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Ընդդիմադիր ու իշխանամէտ թեւերի ներկայացուցիչներն Նոյեմբեր 7-ին ՄԱԱ-ում բանավիճում էին հայ-ռուսական ներկայ յարաբերութիւնների շուրջ:*

*Ընդդիմադիր թեւից ներկայ էին «Ազատական Առաջադիմական» կուսակցութեան քարտուղար Էդուարդ Անտինեանը, Հայաստանի դեմոկրատական կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանը, ՀՀՇ վարչութեան անդամ Արամ Մանուկեանը, ինչպէս նաեւ ԱԺ պատգամաւոր Հմայեակ Յովհաննիսեանը:*

*Իշխանութիւնը ներկայացել էր միայն մէկ ներկայացուցչով ՀՀԿ անդամ Արմէն Աշոտեանով: Նա փորձում էր պաշտպանել իշխանութիւնների վարած ռազմավարական ծրագրերն ու դիմակայել ընդդիմադիր գործընկերների յարձակումներին:*

*Արամ Մանուկեանի կարծիքով, օրինակ, ներկայ իշխանութիւնների յարաբերութիւնները Ռուսաստանի հետ երբեք այդքան վատ չեն եղել, որքան այժմ: «Նոյնիսկ Խորհրդային տարիներին այսքան վատ չէր: Դա պատճառաբանւում է հայկական կողմի վարած արտաքին քաղաքականութեամբ, որն աւելի շուտ յիշեցնում է ճորտատիրական- վասալական յարաբերութիւններ»,- ասում է Արամ Մանուկեանը:*

*Ըստ նրա, Ռուսաստանի յարաբերութիւնները մեզ հետ գործընկերային չեն, քանի որ Հայաստանն է թոյլ տուել նման վերաբերմունք: Ռուսաստանն էլ, ըստ Արամ Մանուկեանի, իր շահերից ելնելով՝ մեզ հետ վարւում է այնպէս, ինչպէս կամենում է, եւ դա նորմալ է:*

*Արմէն Աշոտեանն էլ, «պետական շահերից» ելնելով, պաշտպանում էր իշխանութիւնների «կոմպլեմենտար» քաղաքականութիւնը: Նա փորձեց ներկայացնել մեր արտաքին քաղաքականութեան ընդհանուր բնութագիրն ըստ Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-ՆԱՏՕ, Հայաստան-Եւրամիութիւն ուղղուածութիւնների, որոնք պէտք է էլ աւելի սերտացնել: «Մեր առաջին տնտեսական գործընկերները ԵՄ երկրներն են:*

*Այս առումով սխալ է ասել, թէ մենք կախուածութեան մէջ ենք Ռուսաստանից»,- նշեց Արմէն Աշոտեանը: Իսկ աւելի անկեղծանալով՝ նա աւելացրեց, որ մեծ քաղաքականութեան մէջ, ինչպէս յայտնի է, չկան բարեկամներ, այդ իսկ պատճառով գործադիր իշխանութեան վարած քաղաքականութիւնը բաւականին արդիւնաւէտ է:*

*Հմայեակ Յովհաննիսեանն իր խօսքը որոշել էր կառուցել ասացուածքներով: Օրինակ՝ հայ-ռուսական յարաբերութիւններում նրա համար մտահոգիչ պահերը շատ էին: Հմայեակ Յովհաննիսեանի համար կարեւորն այն չէ, թէ ով ինչ տուեց-վերցրեց.սրանք, ըստ նրա, «ճղճիմ հարցերն» են, այլ այն է, թէ «Ռուսաստանի հետ տարածաշրջանային ի՞նչ ռազմավարական ընդհանուր պատկերացումներ ունենք»:*

*«Ինչպէս ռուսական ասացուածքում է ասւում՝ «Տալիս են վերցրու, խփում են՝ փախի», դա չէ կարեւոր, այլ այն, թէ օրինակ՝ ինչու Ռուսաստանը միւս զարգացող երկրներին 40 միլիարդ ԱՄՆ դոլարի պարտքերը ներեց, իսկ Հայաստանին՝ ոչ: Այս եւ այլ հարցերը, եթէ լուծուէին, Հայաստանը կարող էր դառնալ հայ-իրանական գազամուղի տրանզիտային ճանապարհ: Պէտք է յիշել, որ Ռուսաստանը կովկասեան տարածաշրջանում գերտէրութիւն է, եւ ունի իր կայուն տեղը»,- ասում է Հմայեակ Յովհաննիսեանը:*

*Էդուարդ Անտինեանի կարծիքով մենք «աւելորդ ժամանակ ու էներգիա ենք ծախսում», վերջին հաշուով միեւնոյն է գնալու ենք դէպի ՆԱՏՕ: «Ամէն պատեհ-անպատեհ առիթներով Ռուսաստանին զգացնել ենք տալիս, թէ մենք առանց քեզ «եոլա գնալ» չենք կարող, մենք քեզնից կախուածութեան մէջ ենք: Իսկ, օրինակ՝ Ատրպէյճանը, հանգիստ սկսել է սերտ համագործակցել Ռուսաստանի հետ, քանի որ լուծել է իր այլընտրանքային միւս հարցերը»,- նշեց Էդուարդ Անտինեանը:*

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱՒԱՐԱՐԵՑ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՑԸ



ՍԴ նախագահ Գագիկ Յարութիւնեան

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Ընտրական օրէնսգրքի փոփոխութիւնների ընթացքում, ԱԺ նախկին նախագահ Արթուր Բաղդասարեանի գլխաւորութեամբ դատաւորներն ընդգրկուեցին ընտրական յանձնաժողովների կազմում: ԱԺ մեծամասնութեան հիմնաւորումն այն էր, որ ընտրական յանձնաժողովներում պէտք է ընդգրկել այնպիսի մարմինների կառոյցների ներկայացուցիչներ, որոնք վայելում են հասարակութեան վստահութիւնը:*

*ԱԺ-ն այս անգամ Տիգրան Թորոսեանի նախագահութեամբ կրկին շրջանցեց Սահմանադրութեան 98-րդ յօդուածը եւ փոփոխութեան չենթարկեց ԸՕ-ի այն դրոյթը, համաձայն որի դատաւորներն ընդգրկւում են ընտրական յանձնաժողովների կազմում: ԱԺ մեծամասնութեան կողմից Սահմանադրութեան շրջանցումը պատճառ հանդիսացաւ, որպէսզի Նոյեմբեր 7-ին ՍԴ-ը քննութեան առնի ԸՕ-ի դրոյթների ՀՀ Սահմանադրութեանը համապատասխանութեան հարցը:*

*ՍԴ-ում որպէս ընդդիմադիր 26 պատգամաւորների պաշտօնական ներկայացուցիչներ հանդէս եկան ԱԺ պատգամաւոր Շաւարշ Քոչարեանը եւ «Ժողովրդավարութիւն» հ/կ փոխնախագահ Հրայր Թովմասեանը: Վերջինս մանրամասն ներկայացրեց, թէ ինչու դատաւորները չեն կարող ընդգրկուել ընտրական յանձնաժողովների կազմում:*

*Հրայր Թովմասեանը վստահ, որ դատաւորներին ընտրական յանձնաժողովում ընդգրկելը քանդելու է թէ դատական, եւ թէ ընտրական համակարգը: Որպէս պատասխանող կողմ ՍԴ-ում հանդէս եկաւ ԱԺ օրէնսդրավերլուծական վարչութեան պետ Աշոտ Խաչատրեանը, որը մեղմ ասած, յայտնուեց, ոչ նախանձելի վիճակում:*

*Պարոն Խաչատրեանը չհերքեց ԸՕ-ի եւ Սահմանադրութեան միջեւ առկայ հակասութիւնները, սակայն վկայակոչելով միջազգային փորձը՝ նշեց, որ աշխարհում կան երկրներ, որտեղ դատաւորներն ընդգրկուած են ընտրական յանձնաժողովների կազմում:*

*Ուսումնասիրել բազմաթիւ երկրների փորձը՝ ՍԴ նախագահ Գագիկ Յարութիւնեանը նշեց, որ նման մոդել ունի Վրաստանը, սակայն այնտեղ ընտրական յանձնաժողովներում ընդգրկւում են այն դատաւորները, որոնք ընտրական իրաւունքի հետ կապուած վէճեր չեն լսում: ՍԴ անդամները նկատեցին, որ ընտրութիւնների ընթացքում, եթէ նոյնիսկ Հայաստանում գործող բոլոր դատաւորներն ընդգրկուեն ընտրական յանձնաժողովներում, միեւնոյն է դատաւորների թիւը չի բաւարարի:*

*Սահմանադրական դատարանը հակասահմանադրական համարեց դատաւորների ընտրական յանձնաժողովներում ընդգրկուելը:*

# ՕԵԿ-Ն ՀԱՍԿԱՆՈՒՄ Է՝ ԻՆՉՔԱՆ ԱՆՀԱՒԱՍԱՐ ԵՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Օրինաց Երկիրն» Նոյեմբեր 6-ին տարածել է հաղորդագրութիւն, որ իրենց կուսակցութեան նկատմամբ սեւ քարոզչութիւնը շարունակւում է: Ըստ հաղորդագրութեան՝ շաբաթ օրը Սեւանում եւ Գաւառում ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարեանի եւ կուսակցութեան պատգամաւորների հանդիպումներից յետոյ «հեռուստաընկերութիւններով շարունակուեցին տարածել ՕԵԿ-ին եւ նրա նախագահ Արթուր Բաղդասարեանին վարկաբեկող եւ սեւ քարոզչութիւն պարունակող պատուիրուած նիւթեր, ինչը արգելուած է թէ Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին օրէնքով եւ թէ ՀՀ քրէական օրէնսգրքով»:*

*«Հերթական անգամ դատապարտելով իր նկատմամբ իրականացուող սեւ քարոզչութիւնը կուսակցութիւնը դիմում է Գլխաւոր Դատախազութեանը եւ Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովին՝ միջոցներ ձեռնարկելու եւ ստեղծուած իրավիճակը շտկելու համար: Աւելին, որքան էլ տարօրինակ հնչի, ՕԵԿ-ի հանդիպումներին միշտ էլ մասնակցում են տեղական հեռուստաընկերութիւնները, ձայնագրում են հանդիպումների ողջ ընթացքը, սակայն հետագայում այդպէս էլ չեն լուսաբանում: Այս փաստերը եւս մէկ անգամ գալիս են ապացուցելու, որ Հայաստանում տոտալ վերահսկողութեան տակ է գտնւում լրատուական դաշտը թէ՛ հանրապետական եւ թէ՛ մարզային հեռուստաընկերութիւնները:*

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԸ ՍԻՄ-ԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ՄԻԱՆԳԱՄԻՑ ԴԻՄԵԼ ԴԱՏԱՐԱՆ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց, որ «Սահմանադրական Իրաւունք» միութիւնից (ՍԻՄ) հերքման որեւէ պահանջ չի ստացել, իսկ ՍԻՄ-ին խորհուրդ տուեց միանգամից դիմել դատարան:*

*Անցած շաբաթ ՍԻՄ-ի գործադիր խորհրդի նիստում քննարկուել էր «Հայկական Ժամանակ» թերթում այս կուսակցութեան հետ կապուած հրապարակումների հարցը:*

*Մասնաւորապէս, թերթում «Քաղաքական գրդոնի ասպետները» վերնագրով յօդուած էր հրապարակուել, որն անդրադառնում էր ՍԻՄ-ի երկու անդամների ձայնագրուած զրոյցին, որում նրանցից մէկը պատմում է 2003 թուականի նախագահական եւ խորհրդարանական, ինչպէս նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնների ժամանակ Հայաստանի տարբեր շրջաններից հազարաւոր դոլարներ հաւաքելու եւ Հայկ Բաբուխանեանին փոխանցելու մասին: Յօդուածագիրը եզրակացրել էր, որ «սոյն ընդդիմադիր կուսակցութիւնը նախագահական, խորհրդարանական եւ ՏԻՄ ընտրութիւններում զբաղուած է եղել գրդոնով՝ յանձնաժողովների իր տեղերը վաճառելով»:*

*ՍԻՄ-ի գործադիր խորհուրդը հերքման տեքստ էր պատրաստել, որը ներկայացուելու էր թերթին: Հերքման չտպագրուելու դէպքում, ըստ ՍԻՄ-ի ղեկավար, «Իրաւունք» թերթի խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանեանի, իրենք դատարան են դիմելու՝ զրպարտութեան մեղադրանքով:*

*«Մեր թերթում մարդիկ տիրապետում են իրենց աշխատանքին, եւ եթէ տեսնում են, որ կարող է հերքման խնդիր ծագել, այսինքն՝ փաստերի հետ կապուած խնդիր կարող է առաջանալ, նրանք նախընտրում են այդ նիւթը չտպագրել», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Նիկոլ Փաշինեանը: - «Եթէ ինչ-որ բան տպագրուել է «Հայկական ժամանակ»-ում, նշանակում է՝ հերքման մասին խօսելը ուղղակի ծիծաղելի է»:*

*«Այնպէս որ, ես պարոն Բաբուխանեանին եւ ՍԻՄ-ի յարգարժան գործընկերներին խորհուրդ կտայի միանգամից դիմել դատարան», - ամփոփեց «Հայկական ժամանակ»-ի գլխաւոր խմբագիրը:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԼՈՒՐԵՐ

## ԱՐԱՄ ԱՍԱՏՐԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Նոյեմբեր 7-ին Օշականում կնունքի արարողութեան մասնակիցների մտքով չէր անցնում, որ կնքահայրը մի քանի ժամից կենդանի չի լինի: Իսկ կնքահայրը յայտնի ժողովրդական երգիչ Արամ Ասատրեանն էր, որը ժամը 19:00-ի սահմաններում 53 տարեկան հասակում յանկարծամահ է եղել:*

*Մինչեւ վերջին շունչը, ըստ ականատեսների, երգիչն ունեցել է բարձր տրամադրութիւն:*

*Խնճոյքի մասնակիցներին ասել է, թէ պիտի մի լաւ ուրախանանք: Բայց դրանից ոչ շատ ժամանակ անց՝ հենց սեղանի մօտ կորցրել է գիտակցութիւնը: Նրան անմիջապէս հասցրել են հիւանդանոց, սակայն նրա կեանքը փրկել չի յաջողուել: Ըստ բժիշկների՝ Արամ Ասատրեանը սրտի կաթուած է ստացել:*

*Արամ Ասատրեանը ծնուել է 1953թ. Մարտի 3-ին Էջմիածնում: Ունէր երեք տղայ եւ մէկ դուստր: Որդիներից մէկը վերջերս էր մահացել աւտովթարից՝ 30 տարեկան հասակում: Հնարաւո՞ր է, որ անձնական վիշտը լինէր երգչի մահուան պատճառը: Այս հարցին նրա մամլոյ քարտուղար Հրաչուհի Երանոսեանը պատասխանեց. «Նա իր կեանքի պրոբլեմների մասին չէր բարձրաձայնում»:*

*Արամ Ասատրեանը հինգ օր առաջ է, ինչ ԱՄՆ-ից ժամանել էր*



*Հայաստան, իսկ ընտանիքը շարունակում է ապրել այնտեղ: Նոյեմբերի 10-ին հայկական երաժշտական կենտրոնում տեղի էր ունենալու նրա "My sons" CD-ի շնորհանդէսը: Դրանից յետոյ նա պատրաստւում էր մեկնել համերգային շրջագայութիւնների Ռուսաստան եւ Եւրոպա:*

*Երգչի ընտանիքը կը ժամանի Հայաստան՝ մասնակցելու Արամ Ասատրեանի յուղարկաւորութեանը: Նախնական տուեալներով՝ հոգեհանգիստը տեղի կ'ունենայ նոյեմբերի 10-ին, ժամը 18-ին՝ Էջմիածնի իր բնակարանում: Նոյեմբերի 11-ին երգչի աճիւնը կը դրուի «Արամ Խաչատրեան» համերգասրահում՝ հնարաւորութիւն տալով նրա երկրպագուներին հրաժեշտ տալ, իսկ թաղումը կը լինի Նոյեմբերի 12-ին Էջմիածնում:*

## ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆԵԱՆԻ ՀԱՅՑԻ ԼՍՈՒՄԸ ՅԵՏԱՁԳՈՒԵՑ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Նոյեմբեր 7-ին Քրէական եւ Զինուորական գործերով Վերաքննիչ Դատարանում դատաւոր Արշակ Խաչատրեանի նախագահութեամբ լսուեց «Ժամանակ- Երեւան» թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի հայցը:*

*Արման Բաբաջանեանը զինծառայութիւնից խուսափելու, փաստաթղթերի կեղծելու մեղադրանքով առաջին ատեանի դատարանի կողմից դատապարտուել է 4 տարուայ ազատազրկման: Արման Բաբաջանեանը Յունիսի 26-ից անազատութեան մէջ է, քանի որ նրա նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուել է կալանքը:*

*Դատական այս նիստի ժամանակ փաստաբանները միջնորդեցին խափանման միջոց ընտրուած կալանքը փոխարինել գրաւով: «Այս կարգի յանցագործութեան դէպքում թոյլատրւում է կալանքը գրաւով փոխարինել, սահմանափակ դէպքեր է նշւում, որի դէպքում արգելւում է՝ երբ յայտնի չէ անունը, բնակութեան վայրը կամ փախել է քրէական պատասխանատուութիւնից: Նկատի ունենալով սա, հետեւաբար հիմքեր չկան թոյլ չտալու»,- ասաց դատապաշտպան Հայկ Ալումեանը: Մեղադրական կողմը ներկայացնող դատախազ Ժաննա Կոդիկեանը առարկեց միջնորդութեանը, իսկ դատարանը վճռեց չբաւարարել այս միջնորդութիւնը:*

*Փաստաբանները հանդէս եկան մէկ այլ միջնորդութեամբ՝ պահանջելով երկշաբաթեայ ժամանակ տրամադրել իրենց գործին ծանօթանալու համար: Ջարուհի Փոստանջեանն ու Հայկ Ալումեանը երէկուանից են պաշտպանում Արման Բաբաջանեանի շահերը: Բացի այդ.*

*«Մենք պահանջել ենք վերաքննիչ դատարանին նախագահից տրամադրել մեզ վերաքննիչ դատարանի պրակտիկայի մասին տեղեկատուութիւն, նրանք չեն տրամադրել»,- յայտարարեց Հայկ Ալումեանը, ինչին դատաւորը հեգնեց. «Գուցէ դուք ուզէ՞ք նաեւ Եւրոպական դատարանի պրակտիկան»:*

*Հայկ Ալումեանը հակահարուած տուեց. «Եւրոպական դատարանը իր պրակտիկան տեղակայում է ինտերնետային կայքում եւ կարիք չկայ նրան դիմելու»:*

*Դատարանը վերջին միջնորդութիւնը բաւարարեց՝ փաստաբաններին տալով 2 շաբաթ ժամանակ գործի մանրամասներին ծանօթանալու համար:*

## JANE'S-Ի ԿԱՆԽԱՏԵՍՄԱՄԲ՝ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՄԻՆՉԵՒ 2009 ԹՈՒԱԿԱՆԸ «ՉԱՓԱԶԱՆՑ ԱՆՀԱՒԱՆԱԿԱՆ Է»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Jane's հեղինակաւոր հետազօտական խմբի վերջին վերլուծականի համաձայն՝ Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հնարաւորութիւնը մինչեւ 2009 թուականը չափազանց անհաւանական է:*

*«Հակառակ որոշ յուսադրող նշանների, Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդները հազիւ թէ մօտ ժամանակներս համաձայնութեան հասնեն՝ նոյնիսկ եթէ կրկին հանդիպեն այս տարի: Քանզի կողմերից որեւէ մէկը չի ցանկանայ նման նուրբ հարցում փոխզիջման գնալ ընտրութիւնների տարիներին, այդ ձախողումը չափազանց անհաւանական կը դարձնի որեւէ համաձայնութեան կայացումը 2009 թուականից առաջ», - գտնում են Jane's-ի վերլուծաբանները:*

*«Հետեւաբար, Ղարաբաղի պատճառով հայ-ատրպէյճանական նոր պատերազմի հաւանականութիւնը, որն այժմ փոքր է, ժամանակի ընթացքում կարող է մեծանալ», - եզրափակում են վերլուծական կենտրոնի մասնագէտները:*

## «ԱՆՈՒՆԸ ԿԱՅ ԻՆՔԸ ՉԿԱՅ»

*Շարունակուած էջ 1-էն*

րուն՝ արդարադատական մարմիններու միակողմանի կազմութիւնը, օտար դատաւորներու եւ դատական խորհուրդի (jury) գոյութեան բացակայութիւնը կը նկատուին օրինազանցումներ: Բայց այս բոլորին մէջ մեր ուշադրութիւնը գրաւեց այլ պարագայ մը, որ առիթ ընծայեց մեզի կատարելու կարգ մը խորհրդածութիւններ:

Այդ առիթը հայթայթողը հաւաքական գերեզմանի մը յեղակարծօրէն յայտնաբերումը եղած է Տուճէյլ քաղաքի մէջ, ուր բռնակալին դէմ կատարուած մահափորձ մը, դեռեւս 1982 թուին նիւթուած, արժած էր 148 շիաներու հաւաքական սպանդը, նոյն ինքն բռնակալին կողմէ ու անոնց թաղումը անյայտ հողախումբի մը տակ:

Այս երեւոյթը նկատուեցաւ մարդկութեան դէմ կատարուած ոճիր: Արդեօ՞ք այս յայտնաբերումը նախապէ՞ս կատարուած էր եւ առիթի՞ կը սպասուէր հրապարակելու համար՝ չենք գիտեր: Բայց իրողութիւնն այն է, որ այդ քստմնելի յայտնաբերումը Իրաքի դատախազներու ու ԱՄՆ-ի նախագահ Պուշի մօտ յառաջացուց ընդհանուր յուզումցնցում -զայրոյթ, որոնք արագացուցին դատապարտումը:

Ոչ մէկ վերապահութիւն ունինք Սատտամ Հիւսէյնի բռնակալ վարչակարգին տապալման, մարդկութեան դէմ կատարած ոճրագործութեան դատապարտման, նաեւ, 4 Նոյեմբեր 2006-ին իրեն դէմ առնուած մահուան վճռի հանդէպ: Բայց, մեզ յուզող երեւոյթն այն է, որ Պրն Պուշ ու իր իշխանութիւնը, որոնք «Կարեւոր յաջողութիւն կը տեսնեն» Սատտամի մահուան դատապարտուածութեան մէջ, կը գործածեն երկու չափ, երկու կշիռ:

***

Մարդկային արդարութիւնը մէկդի ձգած, Պուշ եւ իր իշխանութիւնը առաւելաբար կ'առաջնորդուին իրենց պետական շահերու թելադրականութեամբ: Կ'անտեսեն պատմականօրէն փաստացի եւ վաւերական համարուած՝ հայ ժողովուրդի դէմ թուրքիոյ կողմէ գործադրուած ցեղասպանութիւնը: Անգամ՝ կը մերժեն մասսայական բնաջնջումները բնութագրող բառերու գործածութիւնը. օրինակ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ բառը:

Պրն. Պուշ ու իր իշխանութիւնը, որոնք արդարօրէն մարդկութեան դէմ կատարուած ոճիր կը նկատեն Տուճէյլ քաղաքի 148 շիաներու սպանութիւնը, իսկ միւս կողմէ, իր դաշնակից Թուրքիոյ թիկունքին կայնած, չեն ճանչնար աշխարհով մէկ տակաւ ճանաչում գտնող հայոց դէմ իրագործուած Ցեղասպանութիւնը, որուն զոհ գացին աւելի քան մէկ ու կէս միլիոն հաշուող հայորդիներ: Ինչո՞ւ:

Ու տակաւին չենք գիտեր քանի՜ քանի անյայտ անյայտ Տուճէյլներ կան ողջ Թուրքիոյ մէջ, ուր թաղուած հաւաքական հայորդիներու ոսկորներ կը կարօտին պեղումներու:

Երբ կայ ու կը գործէ խտրականութիւնը, մնացեալը՝, գեղեցիկ բեմադրութիւն է, որուն հանդիսատեսները ենք մենք բոլորս, հաւատացէ՛ք:

## «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ»-Ը ԿԸ ՊԱՀԱՆՋԷ

*Շարունակուած էջ 1-էն*

*տուութեան բնագաւառէն ներս չէ բարելաւուած, եւ բռնութեամբ ընկերակցող յարձակումները լրագրողներու վրայ կը շարունակուին», - եզրակացուած է Ազատութեան Տունի տեղեկագիրին մէջ:*

*Երկուշաբթի, Նոյեմբեր 6-ին Միջազգային Թափանցիկութիւն (Transparency International) միջազգային կազմակերպութիւնը հրապարակեց տարեկան իր աղիւսակը, աշխարհի բոլոր երկիրներուն մէջ քաղաքական փտախտի (կոռուպցիայի) եւ կաշառակերութեան վերաբերեալ:*

*Հայաստանի մէջ 2006 թուականին որեւէ փոփոխութիւն չի արձանագրուած անցեալ տարուայ համեմատութեամբ: 163 երկիրներու շարքին Հայաստան մնացած է նոյն՝ 93-րդ տեղը:*

*Այդ տեղը Հայաստանի հետ կը կիսեն նաեւ Արժանթինը, Պոսնիա-Հերցոկովինան, Էրիթրեան, Սուրիան եւ Թանզանիան:*

*Կազմակեպութեան հայաստանեան գրասենեակի ղեկավար Ամալիա Կոստանեան տեղեկագիրի կապակցութեամբ յայտնեց, որ հրապարակուածը «մասնագէտներու կարծիքն է»: «Մեր ուսումնասիրութիւնները եւ այլ ուսումնասիրութիւններ, որոնք գնահատում են հասարակութեան կարծիքը, ունեն աւելի տխուր տուեալներ, որոնք կը հրապարակենք»:*

*Ամալիա Կոստանեանի գնահատմամբ, հակակոռուպցիոն յանձնաժողովը 2006-ին բաւական աներդիւնաւէտ է գործել. անցած 10 ամսուայ ընթացքին այդ կառոյցը, որ ստեղծուած է կոռուպցիայի դէմ պայքարելու նպատակով, նիստ չէ գումարած:*

*«Ունենք օրէնքներ, որոնք չեն կատարւում... Չկայ պատժուող բարձրաստիճան պաշտօնեայ եւ ամենակարեւորը՝ իշխանութիւնները ընտրութիւնների շեմին ոչ մի պատասխանատուութիւն չեն կրում ձախողման համար»,- Միջազգային Թափանցիկութիւն կազմակերպութեան Հայաստանի ներկայացուցիչ Ամալիա Կոստանեան:*

## ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*րիչ Արնոլտ Շուազէնիկկր վերընտրուեցաւ առանց մեծ դժուարութեան, ստանալով ձայներու 56 տոկոը:*

*Ինչ կը վերաբերի հայազգի թեկնածուներուն, Քալիֆորնիա Նահանգի Ընդհանուր Դատախազի պաշտօնի Հանրապետական թեկնածու Ջաք Փուչիկեան չկարողացաւ հասնիլ յաջողութեան, պարտութիւն կրելով իր Դեմոկրատ մրցակից Ճէրի Պրաունի դէմ: Այլ երկու հայեր՝ Կրէկ Աղազարեան եւ Փոլ Գրիգորեան ընտրուեցան Նահանգային խորհրդարանի անդամներ:*

## ԱԶԳԱՅԻՆ

# ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԸ

**ԿԱՌԼԷՆ ԷՓՐԵՄԵԱՆ**

2006 թ. Հոկտեմբեր 12ի Ֆրանսայի Խորհրդարանի ընդունած Հայոց Ցեղասպանութեան ուրացումը պատժող օրինագիծը անշուշտ պէտք է համարել պատմական քայլ, որ էապէս ծառայում է այդ փաստի համաշխարհային ճանաչման ընթացքի արագացմանը: Ընդ որում այդ որոշումը կրում է պատմական իր կնիքի որակաւորումը, անկախ սենատի հաստատման արդիւնքից: Չնայած Թուրքիայի կատաղի առճակատմանը, այդ ընթացքը, թէկուզ մեզ թւում է դանդաղ, բայց ընդլայնուելով ներգրաւում է նոր պետութիւններ եւ ճանաչման կեդրոններ: Ըստ առաջատար քաղաքական մեկնաբանների 2015-2020 թուականներու ժամանակաշրջանում Համաշխարհային հանրութիւնը կարող է լրիւ ճանաչել եւ դատապարտել այդ սարսափելի յանցագործութիւնը մարդկութեան հանդէպ: Ֆրանսան, մինչ այս իր պատմական օրէնքի ընդունումը շատ առոյգ եւ շեշտակի արտայայտել է իր հինգ նախապայմանները, որոնց կատարելուց յետոյ Թուրքիան կարող է ռեալ իրաւունք ձեռք բերի յաւակցել Եւրոմիութեան անդամակցութեանը:

Յայտնի է Թալաաթ Փաշայի նախաձեռնական պատգամը իր կառավարութեանը՝ ստիպել այն երկրի խորհրդարանները, որոնք դատապարտել են Հայոց Ցեղասպանութիւնը, հրաժարուել այդ որոշումից եւ աշխարհով մէկ տեղեակ պահել Թուրքիայի տեսակէտը այդ հարցի նկատմամբ: Այդ հինգ պայմանները ընդգրկում են՝

1. Հրաժարուել Թալաաթ Փաշայի պատգամից:

2. Հրաժարականը ձեւակերպել Թուրքիայի կառավարութեան յատուկ որոշումով:

3. Ճանաչել եւ դատապարտել Հայոց Ցեղասպանութիւնը:

4. Հայաստանի հետ հաստատել դիւանագիտական յարաբերութիւններ:

5. Բացել Հայ-Թրքական սահմանը:

Թուրքիան իր ներքին արձագանքն է արտայայտում, որ իր երկրի ներսում որոշ հանրայայտ դէմքեր կողմնակից այդ փաստի՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչմանը: Հետաքրքիր զուգադիպութեամբ հենց Հոկտեմբեր 12ին Նոպելեան մրցանակ շնորհուեց թուրք գրող Օրհան Փամուկին, որ հրապարակել է իր համոզմունքը մէկ միլիոն հայերի եւ 30 հազար քրտերի տաժանակիր սպանութեան մասին: Ֆրանսայի որոշումը անունելով, որպէս խօսքի ազատութեան կոպիտ խախտում, նա շարունակում է իր պետութեան ներսում կիրառել քրէական օրէնսգրքի 301 յօդուածը, պահանջելով Հայկական ցեղասպանութիւնը ճանաչողների համար մինչ 36 ամիս ազատազրկութեան:

Համեմատութեան կարգով, ցանկանալով ընդգծել Ֆրանսայի խորհրդարանի աւելի զուսպ տեսակէտը - 45 հազար եւրօ տուգանք եւ մէկ տարի ազատազրկում - յիշեցնենք որ Հոլոքոստը չ՝ընդունողների համար Աւստրիայում նախատեսւում է 10 տարի ազատազրկում: Ըստ ԶԼՄի տեղեկատուութեան Հայկական ցեղասպանութիւնը գրպարտողներին 5ից-10 տարուայ ազատազրկման որոշումը պատրաստւում է ընդունել եւ Պելճիքայի Խորհրդարանը: Թուրքիան մտահոգուած է Հայկական Ցեղասպանութեան հաստատման անվերադարձ բնոյթի եւ այլ փաստի հետ: Շատ երկրների առաջատար ապահովական ընկերութիւնները սկսել են կատարել ապահովական գումարների վճարումները Հայկական Ցեղասպանութեան զոհերի ժառանգորդներին: New York Life Insurance Co. ապահովական ընկերութիւնը Սեպտեմբեր 11ից սկսեց այդ գումարների վճարումը այս անձանց ժառանգորդներին, որոնք ապահովել են իրենց կեանք եւ ունեցուածքը Հայկական Ցեղասպանութեան տարիներին: Դատարանի որոշումով 4200 դիմողներից ապահովական գումարներ կը ստանան 3500 հոգի: Այդ մասին «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնեց իրաւաբան Վարդգէս Եղիայեանը, որ պաշտպանում է Հայկական Ցեղասպանութեան ժառանգների իրաւունքները: Նրա խօսքերով, մօտ ժամանակներում «զոհերի ժառանգորդները, որոնք ապրում են Հայաստանում նոյնպէս կը ստանան հատուցում: Իրաւաբանը նշեց, որ 1600-1700 համապատասխան դիմումներ ստացուել են Հայաստանից եւ ԱՄՆից, աւելի քան 500 դիմում Եւրոպայից: Ներկայումս ուսուցման ընթացքում են գտնւում գործերը, կապուած Ֆրանսական ապահովական AXA ընկերութեան հետ: Միաժամանակ իրաւաբանները գործ են բացում, կապուած գերմանական Deutche Bankի հետ: Դրանից յետոյ ապահովական գումարները ստանալու համար նախատեսւում է աշխատել Ֆրանսական եւ Բրիտանական այլ ապահովական ընկերութիւնների հետ: Սեպտեմբեր 26ին Գալիֆորնիոյ նահանգապետ Շուարցնեկըրը ստորագրեց օրէնսդրական ակտ, որով ստարում է Հայկական Ցեղասպանութեան ժառանգորդների իրաւունքները: Գալիֆորնիայում բնակւող Հայկական Ցեղասպանութեան ժառանգորդները կարող են հատուցել դատական պահանջարկ ֆինանսական ընկերութիւնները հանդէպ բռնագրաւած եւ իւրացուած կապիտալի հատուցում ստանալու համար: Օրէնքը նախատեսնում է դատական պահանջարկի ժամկէտային յետաձգումը մինչեւ 2016 թ. Դեկտեմբերի 31ը: «Պրոցեսը գնաց» (Process moved) ինչպէս ժամանակին արտայայտուեց Գորբաչեւը, բայց այդ պրոցեսը կը դառնայ աւելի լիարժէք եւ խոստումնալից եթէ իրենց արխիւները բացեն եւ Թուրքիայի ապահովական ընկերութիւնները:

«Ո՞վ է հիմա յիշում Հայոց Եղեռնը» Հիտլերի հանրայայտ արտայայտութիւնը նախաբան դրեց հրեաների Հոլոկոստին: Տեղին է նշել, որ պաշտօնական Իսրայէլը, իւրայատուկ «խանդի զգացմունքով» է վերաբերւում իրենց Հոլոքոստի եզակիութեան տիտղոսին - պաշտօնապէս դեռ ուշանում է ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը, չնայած որ Հրէական մտաւորականութիւնը չի կիսում իշխանութեան տեսակէտը: Ի տես Իսրայէլում մերկանտիլիզմը Թուրքիայի հետ յարաբերութիւններում սկսել է գիջել իր դիրքերը: Իսրայէլի յայտնի գիտնական, Դոկտ. Եայիր Սուրոնը Հիւսիսային Ամերիկայի մի շարք քաղաքներում դասախօսութիւններ է կարդացել, ներկայացնելու իր գիրքը՝ «Ժխտման Տրիվիազութիւն. Իսրայէլը եւ Հայոց Ցեղասպանութիւնը» վերնագրով: Այդ տեսակէտը արտայայտեց նաեւ Իսրայէլի կրթութեան նախարար Եուսի Սարիդը, Երեւան կատարծա իր այցելութեան ժամանակ: Ազգի ինքնամաքրման վառ օրինակ ցուցաբերեց Գերմանիան, յիրաւի արժանավայել Եւրոպական քաղաքակիրթ երկիր-աշխարհից, հրեաներից ներողութիւն խնդրեց իր մեղքն ընդունելով, ցայսօր շարունակում է փող հատուցել երկրորդ աշխարհամարտի ժամանակ զոհուած հրեաների հարազատներին: Ի հարկէ մնամ քննախօսութիւնը Թուրքիայի վերաբերեալ թւում է անհեռանկար, քանի որ կան դեռ Եւրոպայում եւ այլոց մի շարք ապահովական ընկերութիւններ, որոնք չեն շտապում արձագանքել «ժամանակի հրահանգին»: Իրաւաբանների խօսքերով սրանք նրանք գերադասում են սպասել յոյսով որ ժամանակի հետ կը նօսրանայ ժառանգորդների թիւը, որոնք հաւաքում են ստանալ հատուցում: Իսկ այդ ֆոնի վրայ ի՞նչ կարելի է սպասել Թուրքիայում գործող ապահովական ընկերութիւններից, որոնք ուղակիօրէն կարող են ոնչացնել անցանկալի փաստաթուխթերը: Այստեղ ես ուզում եմ վերադառնալ այն հարցին, որ նշուած է յօդուածի անուանման մէջ: Այս թեմայի կոնտեկստում չեմ կարող մոռանալ լրագրող Սայ Ֆրումկինի յօդուածը, որ անուանուած էր՝ «Ինչի՞ համար ես լցուած եմ յատուկ գերշնորհակալութեամբ յարգանքով հանդէպ Ֆրանսայի կառավարութեանը»:

Յօդուածի բովանդակութիւնը կայանում է նրանում, որ մի քանի տարի առաջ Ֆրանսական կառավարութիւնը սահմանել է յատուկ 80 միլիոն տոլարի չափով հիմնադրամ՝ այն հրեաների նիւթական կորուստների փողհատուցման համար, որոնք իրենց պանքային ներդրումները կորցրել են երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Ֆրանսայի դեսպանը իր մօտ է հրաւիրել ռուսական ԶԼՄների ներկայացուցիչներին որպէսզի նախկին Խորհրդային Միութեան հրեայ գաղթականները տեղեկացուեն այդ հիմնադրամի ստեղծման մասին: Յօդուածում բերւում են փաստեր այն մասին, որ բազմաթիւ եւրոպական ապահովագրական ընկերութիւններ Հոլոքոսթի զոհերին պատկանող միլիարդները իւրացրել են: Սայի հայրը, այն ժամանակ (մինչ 1940 թ.) կապիտալիստական Լիթվիայում Ֆրանսական աւտոկոնցեռն «Ռենոյի» աշխատակից էր, իսկ մայրը Սորպոնի համալսարանի շրջանաւարտ էր: Հեղինակը նշում է որ չնայած նա չի ունեցել որեւէ փաստաթուղթ, պարտքագիր կամ այլ տեղեկութիւն, սակայն դեսպանի հաղորդումից յետոյ եկել է այն եզրակացութեան որ իր ծնողները կարող էին ունենալ դրամային ներդրում Ֆրանսական որեւէ պանքում: Զգացուելով Ֆրանսական կառավարութեան ցուցաբերած յարգալից վերաբերմունքի համար նա դիմել է Ֆրանսական կառավարութեանը, շուտով մոռացել է այդ մասին: Մօտ երկու տարի յետոյ նա ստանում է Ֆրանսերէն-Անգլերէն լեզուներով գրուած նամակ այն մասին, որ իր դիմումը ուսումնասիրման փուլում է գտնւում: Եւս երկու ամիս յետոյ նա ստանում է նամակ, որտեղ Ֆրանսայի վարչապետը յայտնում է, որ Ֆրանսական կառավարութիւնը եկել է այն համոզման որ իր (սայի) ծնողները կարող էին ունենալ գումարային ներդրում որեւէ Ֆրանսական պանքում եւ տրամադրում է որպէս փոխհատուցում, երեք հազար

Շար.ը էջ 16

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ
A.B.A. INSURANCE SERVICES
Blue Shield of California Authorized Agent
1975-2005 30th ANNIVERSARY
E-mail: BMaronian@AOL.com
818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

## ԱԶԳԱՅԻՆ

# ԼՐԱՑԱՒ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ 99-ԱՄԵԱԿԸ

### «Դէպի դարադարձ սա թերթի գործունէութեան վերջին անկիւնադարձն է»




*Մէկ տարի անց այս թերթը կ'ողջունի իր հարիւրամեակը: Այսօրուայ տարեդարձը կարծես միջանկեալ հանգրուան լինի դէպի դարադարձ:*

*1908թ. Հոկտեմբերի 28-ին հիմնուեց «Ժամանակ» օրաթերթը: Այդ օրը, անշուշտ, ոչ ոք չէր կարող կռահել, որ հայ մամուլի ամենաերկարակեաց օրաթերթի ողիսականն էր սկսւում՝ երիցս երանեալ Միսաք եւ Սարգիս Գոչունեան հոգելոյս եղբայրների հիմնադրութեամբ, որոնց դրոշմը մինչեւ այսօր զգացւում է «Ժամանակ»-ի դիմագծի եւ գործունէութեան վրայ: «Ժամանակ»-ի հիմնադրման շրջանում Պոլիսը Պոլիս էր՝ բառին բուն, ամենաընդգրկուն իմաստով:*

*Այդ ժամանակ, հայ ժողովրդի համար ճակատագրական գործընթացներ էին տեղի ունենում այս քաղաքում: Արեւմտահայութեան զարկերակը այստեղ էր, հայերը չէին դադարում քաղաքական, տնտեսական եւ սոցիալ-մշակութային ասպարէզներում «գործուն» լինել:*

*Իհարկէ, այդ մթնոլորտում օրաթերթ հրատարակելը ունէր մեծ նշանակութիւն: Հայ մամուլը իր ամենափայլուն շրջաններից մէկն էր ապրում թէ՛ քանակի եւ թէ՛ որակի առումով: Եւ այդ տեսակաւոր մէջ էլ «Ժամանակ»-ին յաջողուեց ապահովել ուրոյն դիրք, դառնալով իսկապէս ժողովրդական օրաթերթ: Մի խօսքով, այդ շրջանում ճապէս տարբեր էր թերթի առաքելութիւնը, եւ պատմութիւնը վկայ է, որ այդ առաքելութիւնը պատուով իրականացուել է «Ժամանակ»-ի կողմից, զուտ մասնագիտական առումով: Այլապէս, արդէն յայտնի է, որ քսաներորդ դարասկզբի այդ հատուածի գործընթացները ընդհանրապէս դրական ոչինչ չբերեցին հայ ժողովրդին:*

*Յաջորդ տասնամեակներին, «Ժամանակ»-ի ընթացքը համահունչ եղաւ Թուրքահայ համայնքի ընդհանուր գնացքին: Քաղաքական դաշտից բացի, տնտեսական եւ սոցիալ-մշակութային ոլորտներում նոյնպէս հետզհետէ դադարեցին «գործուն» լինել հայերը: «Ժամանակ»-ն էլ դարձաւ համայնքային թերթ , փոքրամասնական մամուլ: Անշուշտ, չենք թերագնահատում այդ առաքելութիւնը, ինչը ամբողջ սփիւռքահայ մամուլի իրականութիւնն էր, սակայն հիմնադրման շրջանի համեմատ, սա կենսագործունէութեան այլ հարթութիւն եղաւ «Ժամանակ»-ի համար, եւ այս փուլը շարունակւում է մինչ օրս:*

*Բայց գրականութեան եւ արուեստի մէջ, ընդհանրապէս կայ նաեւ, մի ինչ որ միստիկական խորհուրդ, առեղծուածային, որ անշուշտ գիտութեան մէջ անյարիր է քանի որ գիտութեան մէջ ամէն ինչ պիտի լինի պարզ ու տրամաբանական եւ յատկապէս փորձնական: Ամէն դրոյթ այստեղ պիտի փորձի ենթարկուի բազմաթիւ անգամ եւ տայ միեւնոյն արդիւնքը:*

*Ամենայն Հայոց Կաթողիկոս, երջանկայիշատակ Վազգէն Ա.ը, իր գրուածքներից մէկում ասում է՝ «Այո, խորհրդաւոր եւ միստիկական երեւոյթ է, Յիսուսի ծնունդը, կոյս Մարիամից: Բայց չէ որ, ընդհանրապէս ամէն ծնունդ, ամէն մայրութիւն, ըստ էութեան, ինչ որ չափով եւ իմաստով պարունակում է խորհրդաւորութիւն եւ միստիկականութիւն: Եւ մայրութեան եզակիութիւնը եւ վսեմութիւնը այդտեղից է բխում»:*

*Եթէ վերծանենք երջանկայիշատակ Կաթողիկոսի այս խօսքերը եւ փոխադրենք հոգեբանական գետնի վրայ, հետեւեալ եզրակացութեան կը յանգենք, որ՝ գրական երկի նիւթը կարող է սկսել այնտեղից, ուր գիտութիւնը ներկայումս բան չունի ասելու. բայց, քանի որ գիտութեան յառաջընթացը սահման չունի, ուրեմն գրականութիւնը միշտ էլ ասելիք կ՚ունենայ:*

*Եւ այդ ասելիքը միշտ ունկնդիր կ՚ունենայ պայմանով որ մի քիչ խորհրդաւոր եւ առեղծուածային լինելով հանդերձ ոտից գլուխ առեղծուածային չլինի. որպէսզի, նուազագոյն հնարաւորութիւնը ունենայ (ինչպէս ասացինք քիչ առաջ) թափանցելու մարդկային բանականութիւն եւ ընկալուելու: Ճիշտ այնպէս, ինչպէս օրինակ թուաբանական խնդիրն է, պիտի ներկայացնի որոշ յայտնի տուեալներ եւ դրանք օգտագործելով, գտնել «անյայտը» եւ գեղարուեստական հաճոյք ստանալ գրական երկից: Պարզեմ ասածս մի օրինակով, մի շատ արտառոց օրինակ, բայց եւ մատչելի:*

*Ֆրանսական գրականութեան մէջ, գերիրապաշտ (surrealiste) բանաստեղծ Գիյոմ Ապոլլիները, շատ տարօրինակ է, երբ իր բանաստեղծութիւնների շարքի մէջ, Փարիզի Էյֆելի աշտարակի մասին (որ մեծ քանակութեամբ երկաթների կոյտ է եւ բնականօրէն թւում է բանաստեղծական որեւէ հրապոյրից զուրկ, խօսում է այսպէս՝ «Էյքել, գիտեմ որ դու յոգնել ես, Սեննայի (Փարիզի միջից հոսող յայտնի գետը) կամուրջներին հովուելուց»:*

*Այստեղ, Էյֆելը (երկաթներից կառուցուած աշտարակ) դարձել է հովիւ, իսկ Սեննայի կամուրջներն էլ, որ նոյնպէս իմ կարծիքով բանաստեղծօրէն ոչ մի հրապոյր չունեն, դարձել են ոչխար: Որտեղ է լսուած, որ անհրապոյր կամուրջները նմանեցուեն ոչխարի: Այդուհանդերձ այս բոլորը ընկալւում, ընդունւում եւ մեծ հաւանականութեամբ հաճոյք պատճառում բազմաթիւ ճաշակների, որովհետեւ փոխաբերութեան տարրերը՝ կամուրջ, Էյֆել, ոչխար, հովիւ, բոլորն էլ մատչելի եւ յայտնի հասկացութիւններ են մեզ համար:*

*Մէկ խօսքով, հոգեբանօրէն ինչ որ ընկնում է ուսման եւ դաստիարակութեան միջոցով մեր ուղեղում ստեղծուած մտային կաղապարների մէջ, ընկալւում, վարակւում եւ յուզում է, եթէ ոչ, ոչ մի ազդեցութիւն չի թողնում եւ մերժւում, արգելակումի է հանդիպում մեր ոչ միայն տրամաբանական, այլ նոյնիսկ, շեշտում եմ, յուզական աշխարհի նաեւ ենթագիտակցականի եւ անգիտակցականի կողմից:*

*Նրանք, որ նկատի չեն առնում այս բացարձակ եւ անհերքելի ճշմարտութիւնը, իրենց գրուածքում նմանւում են այն հնարիչին, որ ֆիզիքայի օրէնքների համաձայն մի գործիք է հնարել, որ կարելի է գործածել, եթէ մարդը իր իւրաքանչիւր ձեռքի վրայ ունենայ եօթ մատ: Բայց մենք ունենք հինգ մատ:*

*Անմիջապէս աւելացնեմ, որ այս բոլորը ես ասում եմ, որպէս սոսկ մի հոգեբան-թեքնիսիան, մասնագէտի պաղարիւնութեամբ եւ առարկայականութեամբ:*

*Այս բոլորին, վստահ եմ, երբեք չի հակասի, որ յայտարարեմ, թէ ես անձամբ ամենայն ջերմութեամբ ու հաւատքով կողմնակից ու ջատագովն եմ արուեստագէտի բացարձակ ազատութեան:*

*Այստեղ, կարելի է բացարձակ ազատութեան կողմնակից եւ մոլի պաշտպան լինել: Մարդու ազատութիւնը, սահմանափակւում է մի կէտում, այսինքն ուրիշի ազատութեամբ: Մինչդեռ, իմ կարծիքով գրողի եւ բանաստեղծի ստեղծագործական ազատութիւնը սահման չունի, որովհետեւ ստեղծագործական ազատութիւնը ընդհանրապէս, ոչ մէկի ազատութիւնը չի սահմանափակում, ոչ ոքի չի վնասում:*

*Հասարակութեան անդամները հենց իրենք յետ կը մղեն հակաբարոյական թոյլ ստեղծագործութիւնը:*

*Եթէ արուեստի որեւէ գործ խոտան լինի, ինքը հասարակութիւնը կը մերժի: Պէտք չկայ ոչ մի ցենզուրի, արհեստական ճնշման, որ ամէն զգացում, ամէն ապրում, կարող է լինել արուեստի, բանաստեղծութեան նիւթ, դա բացարձակ ճշմարտութիւն է: Բացառութիւններ կան չեշտուած օրէնքներում, երբ յատուկ պայմաններում արգիլւում է բարոյալքիչ եւ ազգադաւ ու հայրենադաւ ելոյթները (պատերազմի ժամանակ, օրինակ, արգիլւում է որեւէ քայլ, ուր քաջալերւում է որեւէ ձեւով դասալքութիւնը բանակում եւ այլն...):*

*Իմ տեսակէտով դրական իմաստով կարելի է շատ գրողների, բանաստեղծների համար լաւագոյն նմուշը հանդիսանայ հանճարեղ Չարենցը: Վերցրէք իր երկերի ժողովածուն, կարդացէք սկզբից մինչեւ վերջ եւ այնտեղ կը տեսնէք ամենաանձնական զգացումներից սկսած մինչեւ գրական, հասարակական եւ քաղաքական, համաշխարհային, համամարդկային խնդիրների վերաբերեալ իւրովի եւ ամբողջովին ինքնատիպ մօտեցումներ. նոյնիսկ բանաստեղծական ձեւերի, ոճերի եւ ժանրի տեսակէտից:*

*«Արուեստը արուեստի համար» նշանաբանը արդէն հնութիւն է բուրում, ժամանակավրէպ է եւ լքուած գրական բոլոր շրջանակների կողմից: «Բացարձակ ստեղծագործական ազատութիւն», այո համաձայն ենք, բայց միեւնոյն ժամանակ, որքան լաւ է, որ բանաստեղծը լինի հենց նոյն Չարենցի ասելով, «Իր ժամանակի շունչը»:*

*«Մարդու եւ իր շրջապատի մէջ եղած կապը» հետաքրքրութեան եւ ուսումնասիրութեան նիւթ է դարձել վերջին տարիներս, մարդուն առնչուող շատ գիտութիւնների եւ ի միջի այլոց հոգեբանութեան մէջ: «Գրողը եւ իր շրջապատը», այս արդիական նիւթը շօշափելուց չի կարելի չակնարկել մեր անգուգական Յովհաննէս Թումանեանին, որ ըստ իս լիակատար օրինակն է այդ մարզում:*

*Նա ներկայացնում է հարազատօրէն շրջապատը իր ամբողջութեան մէջ՝ մարդիկ, կենդանական եւ բուսական աշխարհը, անշունչ բնութիւնը առհասարակ:*

*Ահա թէ ինչ է գրում գրականագէտ Վարդգէս Դաւթեանը իր «Թումանեանի ստեղծագործութեան հոգեբուժիչ արժէքը» գրքի մէջ (տպուած Երեւան, 1995ին, էջ 24):*

*«Մանկական հոգեբուժութեան, յատկապէս մանկական նեւրոզների եւ նեւրոտիկ վիճակների հոգեթերապիայում (հոգեկան դարմանում) զգալի դեր կարող են խաղալ Թումանեանի հեքիաթները, բալլադները, պատմուածքները, զրոյցները, մանկական բանաստեղծութիւնները», (ընդգծումը իմ կողմից):*

*Իմ կողմից աւելացնեմ, որ երբ ես 1978ին առաջին անգամ գտնուեցի Հայաստանի Լոռիի չնաշխարհիկ եւ իսկապէս հմայիչ լեռնաշխարհում, ինձ յաճախ թւում էր թէ ես այդ բոլոր տեսարանները նախկինում տեսել եմ: Յետոյ անդրադարձայ, որ այո, այդ բոլորը տեսել եմ նախկինում, բայց երեւակայութեան աչքերով միայն՝ Թումանեանի երկերում:*

*Համաշխարհային գրականութեան մէջ, այն գրողները, որ իրենց ստեղծած կերպարների եւ միջավայրի հոգեբանական կողմը նկատի են առել եւ զարգացրել են, բազմաթիւ են: Յիշենք ամենանշանաւորներից մի քանիսին՝ Շեքսպիրը, Բալզակը, Դոստեւսկին, Գոգոլը, Չեխովը, Մարսել Պրուստը, Ստեֆան Ցւայգը, Կաֆկան, Բերտոլ Բրեշտը, Ժան Պոլ Սարտրը, Կամիւն, Սերւանտեսը, Տենեսին եւ Ուիլիըմ Սարոյեանը:*

*Հայ գրողներից, բացի Ուիլիըմ Սարոյեանից (որ անգլերէն էր գրում), հոգեբանական դրոյթները նկատի են առել եւ առնում են ժամանակակից գրողներից շատերը, որոնցից յիշենք մի քանիսին՝ Նարդոսը, Ստեփան Զօրեանը, Թումանեանը, Վախթանգ Անանեանը, Մկրտիչ Արմէնը, Պարոյր Սեւակը եւ յատկապէս արձակագիր՝ Հրանտ Մաթէոսեանը եւ սփիւռքում՝ Յակոբ Կարապենցը:*

*Հիանալի նմուշներ կան այդ մարզում, հայ դասական գրողների մօտ. օրինակ՝ Աւետիս Ահարոնեանի «Աքաղաղը» պատմուածքը, ուր գրողը մի հայ գիւղի կոտորածի ահաւորութիւնը ներկայացնում է մի աքաղաղի աչքերով եւ ուղեղով, ամենայն հմտութեամբ, նկատի առնելով կենդանիների հոգեբանութեան (այս պարագային՝ աքաղաղի) առանձնայատկութիւնները:*

*Կամ թէ՝ երբ Վախթանգ Անանեանը խօսում է Արարատեան դաշտի արագիլների մասին, շատ յուզիչ, բայց նաեւ ճշգրիտ ներկայացնում է մայրական սէրը, նոյնիսկ «ամուսնական» սէրը (եթէ կարելի է այդպէս անուանել) այդ թռչունների մօտ:*

*Կամ ինչպէս, Շիրվանզադէն ցոյց է տալիս պատանեկան սիրոյ ուժգնութիւնը, անկեղծութիւնը անաղարտութիւնը, իր «Արտիստը» հիանալի պատմուածքում:*

*Կամ թէ ինչպէս Ատրպետը իր «Տժւժիկ» պատմուածքում ցոյց էտալիս մարդկային բնաւորութեան որոշ արատներ, չտես եւ ցուցամոլ ունեւորի մօտ, բայց նաեւ միւս կողմից, դրամով աղքատ, բայց հոգով հարուստ մարդու մօտ՝ մարդկային ինքնասիրութիւնը, արժանապատուութեան զգացումը, արդար հպարտութիւնը եւ այլն... այս շարքում, չի կարելի չյիշել, մեր աննման թատերագիր՝ Գաբրիէլ Սունդուկեանին, իր «Պեպօ»ով (որից նկարահանուած «Պեպօ» ֆիլմը մտել է Համաշխարհային ֆիլմադարանը, որպէս կինօարուեստի գլուխ գործոցներից մէկը) եւ «Խաթաբալայ»ով եւ մի քանի ուրիշ թատերկներով:*

*Խօսքս աւարտում եմ մի փոքրիկ ակնարկ կատարելով Յովհաննէս Թումանեանի, որպէս մանկագիր, հոգեբանութեան առումով:*

*Շար.ը էջ 16*

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ՍՐՏԻ ԱՂԲԻՒՐ»
### ԻՍԿԱՆԴԱՐ ԻՍԿԱՆԴԱՐԵԱՆ

*Ստացանք Իսկանդար Իսկանդարեանի, այլ անունով՝ Գուսան Ապերի չափածոյ հեղինակութիւններու հատորը, որ խմբագրած է «Հայ Կեանք»ի խմբագիր Աֆօ Ջափարեան, ձեւաւորած է Կարինէ Մկրտումեանը եւ գրքի հրատարակութեան գլխաւոր հովանաւորութիւնը վերցուցած է բժշկուհի Ադելինա Որբերեան:*

*265 էջերէ բաղկացող գեղատիպ տպագրութիւն մը, որ լոյս տեսած է Հայ Կեանք Հրատարակչատունէն, Կլէնտէյլ, Քալիֆորնիա:*

*Գուսան Ապերի կենսագրական գիծերուն եւ ներկայ ստեղծագործութեան ունեցած արժանիքներուն մասին անդրադարձումներ կատարած են Աբօ Ջափարեանի (Խտացուած Տիեզերք), Շնորհիկ Նազարեան (Հեղինակին Մասին, Համառօտ Կենսագրութիւն), Մանկագիր՝ Գառնիկ Առաքելեան (Գրախօսութիւն), Ալֆրետ Պաղտասարեան, հայագէտ, (գրախօսական) եւ Պօղոս Լագիսեան (գրախօսական):*




*Գուսան Ապերի բանաստեղծութիւնները ընդհանրապէս իր անձնական յոյզերուն, ընտանեկան ջերմութեան կարօտի, սիրային տուայտանքներու, հայրենասիրական, տիրող անօրինութիւններու դէմ պայքարի եւ պատգամներու խմորումներ ունին:*

### «ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԵՒ ՄԻՋԱԳԵՏՔԸ»
### ՊԵՏՐՈՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ

*Պասրա ծնած, Պաղտատ Երկրաչափական գոլէճէն շրջանաւարտ, իր ստորագրած պատմական բնոյթի յօդուածաշարքով, «Անցեալին Այս Օր», Պետրոս Թովմասեան ծանօթ անուն է գաղութէս ներս: Ան, նաեւ իր աշխատակցութիւնը բերած է ''Մասիս'' շաբաթաթերթիս:*

*«Հայկական Լեռնաշխարհը եւ Միջագետքը» պատմական բովանդակութեամբ խղճամիտ ուսումնասիրական աշխատասիրութիւն մը, որ կը բաղկանայ 198 էջերէ: Մաքուր տպագրութիւն: Հոն կան վիմաքանդակներ, պատմական արձաններ եւ բացատրողական աշխարհաքարտէսներ: Գիրքը Լոյս տեսած է «Զանգակ 97» հրատարակչութենէն, Երեւան:*

*Ուսումնասիրութիւնը կ՚ընդգրկէ Հայկական Լեռնաշխարհի եւ Միջագետքի ժողովուրդներու միջեւ գոյութիւն ունեցած բազմամարդ քաղաքական, տնտեսական, դիցաբանական, մշակութային, եւ այլ տարածքի կապեր, որոնք լուրջ ազդեցութիւններ թողած են երկու ժողովուրդներու զարգացման ու փոխյարաբերութիւններուն վրայ հին ժամանակներէն սկսեալ:*

*Հեղինակը օգտագործած է հայկական 29, արաբական 50, եւ անգլիական 13 երկար շարքի վաւերական աղբիւրներ:*

*Ուսումնասիրութիւնը, որ կը սկսի պատմութեան դարասկիզբէն. (Ք.Ա. 9-րդ դար:) կ՚ընդգրկէ Ուրարտական եւ Երուանդեան շրջանները՝ կանգ առնելու համար Արտաշէսեան հարստութեան վրայ, որուն վերջ տուաւ հռովմէական կայսրութիւնը Ք.Ե. թիւ 1 տարին:*

### «ԵՐԱԽՏԱՒՈՐՆԵՐՈՒ ՈՒՂԻՆ»
### ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

*«Երախտաւորներու Ուղին» ներկայ գիրքը կը կազմէ Արա Ահարոնեանի երրորդ գործը՝ իր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը» եւ «Հերոսական Դէմքեր Ռ.Ա.Կ.ի» զոյգ հրատարակութիւններէն ետք:*

*Գիրքը կը բաղկանայ 215 պատկերազարդ էջերէ, եւ հրատարակութիւնն է ՌԱԿ Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան: Գիրքին յառաջաբանը, «Գիտակից Յանձնառութեամբ» վերտառութեամբ, գրած է մեր վաղեմի բարեկամ եւ ծանօթ արձակագիր՝ Արամ Սեփեթճեան:*

*Ահարոնեան, իր լոյս ընծայած ներկայ հատորը կը նուիրէ իր կուսակցութեան 85-ամեակին: Այդ առիթով, ան կ՚անդրադառնայ, ի մէջ այլոց, անոր դաւանանքին, ուղեգծին, եւ պատմական անցքերուն՝ համառօտակի կերպով:*

*Այնուհետեւ կը սկսի շարքը 30 լուսապատկերներու՝ սկսեալ ՌԱԿ-ի կազմութեան հիմնադիր ժողովէն (Հոկտեմբեր 1-1920) մինչեւ մեզի ժամանակից ժամանակաշրջանը 2006:*



*Արա Ահարոնեան իր ներկայ գործին մէջ արժանաւորապէս կը մեծարէ իր կազմակերպութեան ազգային, հայրենասիրական, քաղաքական եւ պահանջատիրական առաքելութեան սատար՝ նուիրեալ, շարքային առաջնորդ հեղինակութիւնները: Անոնցմէ շատեր, մեզի ժամանակակից երաժիշտ, (Հ. Պէրպէրեան) գրող (Ա. Անդրէասեան), ուսուցիչ-խմբագիր (Գերսամ Ահարոնեան), նոյնպէս ղեկավար անձնաւորութիւններ (Փրոֆ. Բ. Թովմասեան, Հ. Սեդրակեան, Յ. Դաւիթեան, եւ ուրիշներ), գործակիցներ եղած են մեզի: Անոնք մեր յիշողութեան մէջ թարմ, եւ յարգանքին արժանի ազգային եւ քաղաքական գործիչներ եղած են տասնամեակներ ամբողջ::*

*Արդարեւ, շահեկան աշխատասիրութիւն մը, որ նաեւ կը վարկաւորէ հեղինակը, Արա Ահարոնեան անձը:*


Թէքէեան Մշակութային Միութեան
Հիմնադրութեան 60-ամեակին առիթով
ԹՄՄ, Փասատինա-Կլէնտէլ Մասնաճիւղը
Կը ներկայացնէ

Հովանաւորութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ
Գերաշնորհ Յովնան Արք. Տէրտէրեանի

Նիւ Եորքի Սբ. Վարդան Տաճարի
Շուշի Պարախումբը
Իր Անդրանիկ Միակ Ելոյթով Լոս Անճելըսի Մէջ
Պարուսոյց – Գեղարուեստական Ղեկավար
Սեդա Փաքալեան-Քանթարճեան
Մասնակցութեամբ
Սիրուած Երգիչ Յովիկ Գրիգորեանի
եւ նուագչական Ղեկավար Անդրանիկ Մուրադեանի

Տեղի Կ՚ունենայ
Կիրակի, 3 Դեկտ. 2006-ի երեկոյեան ժամը 4:00-ին
Փասատինա քաղաքի Գոլէճի Սէքսըն
հանդիսասրահին մէջ
1570 E. Colorado Blvd., corner of Hill street
(Parking For $ 1.00 Is Available In The Structures On Bonnie & Hill Streets)
Տոմսերու արժէք: $50, $40, $30, – $20

Տոմսերու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն:
Գրատուն Պերճ : 818-244-3830
Ապրիլ Գրատուն : 818-243-4112
Մարալ Ղազարեան : 626-296-2921 8.00am-1.00pm.



ՔԱՋ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 11:00-ից 1:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից


Mission Liquor & Wines
WE WILL BEAT ANY ADVERTISED PRICE!
Russian Standard
Vodka
750ml
$13.99
Chivas Regal
12 Yr Scotch 750ml
Stolichnaya
Vodka 1.75L
$16.99
Corralejo
Reposado Tequila
750ml
$17.99
Anejo $36.99
Blanco $21.99
Hennessy
Cognac 750ml
VS
$20.49
VSOP
$28.99
Absolut
Vodka
750ml
$13.99
Johnnie Walker
Black Label 750ml
$20.49
Red Label 750ml
$14.49
Imperia
Vodka 750ml
Ketel One
Vodka 750ml
$17.99
Courvoisier
VS Cognac 750ml
Level
Vodka 750ml
$17.99
Grey Goose
Vodka 750ml
Belvedere
Vodka 750ml
$20.99
Louis XI
XO Brandy 750ml
$14.99
Sauza
Tres Generaciones
750ml
$22.99
Anejo , Blanco or Reposado
Patron
Silver Tequila
750ml
$33.99
Anejo /Reposado
750ml $29.99
1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Liquor (626) 794-7026 • Tobacco (626) 797-0500
Corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm
www.missionliquor.com
*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 11/18/06 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No checks or credit cards

## ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԷՍ
# ԾԵՐԱՑԵՐ ԵՄ

*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

*Կ'անձրեւէ: Այն տխուր ու երկարատեւ անձրեւներէն՝ որ վերջ չունի կարծես:*

*Առաւօտուն սրճարան երթալու եւ սուրճ մը առնելով սիկարէթ մը ծխելու պահն է: Բայց անձրեւը գլխս այդ հաճոյքէն ալ կը զրկէ: Աչքերս տկարացած են եւ չեմ ուզեր ինքնաշարժ վարել՝ կեանքիս վերջին տարիներուն ալ վտանգելով: Երէկ արդէն պատկան գրասենեակը երթալով ինքնաշարժ վարելու իրաւունքէն հրաժարեցայ կամովին:*

*Ի՞նչ... կամովի՞ն ըսի, ինծի՛ հարցուցէք եթէ իրաւ եմ:*

*Ծերացեր եմ:*

*Հիմա սուրճին ու սիկարէթին պահն է, բայց յանդգնութիւնը չունիմ անձրեւանոցով մը փողոց ելլելու: Սակայն ամէն ինչին ճարը կայ, եթէ մարդ յարմարիլ գիտէ: Այո՛, յարմարիլ պէտք է: Ուրեմն, սրճարանին փոխարէն բակս կայ, բանջարանոցով ու ծաղկանոցով գեղեցկացած բակս, որ այս պարագային, կրնայ սրճարանի տեղ ալ ծառայել: Կը պատրաստեմ սուրճս, կը վառեմ սիկարէթը եւ բակին դուռը կը բանամ դուրս ելլելու համար, բայց սաստիկ է անձրեւը եւ չեմ յանդգնիր բակին մէջ հաստատուած ծածկին տակ երթալու: Անճար՝ սեմի սանդխամատին վրայ նստած, պարտէզս դիտելով կը վայելեմ սուրճն ու սիկարէթը:*

*Այսօր ալ թող այսպէս ըլլայ, յարմարիլ պէտք է:*

*Ծածկին տակ զետեղուած սեղանին ներքեւ զոյգ մը թռչնիկներ մեր երէկ գիշերուան ճաշկերոյթին փշրանքներով փոր կը կշտացնեն: Ինչ փոր կշտացնել, ճաշկերո՛յթ, իսկական ճաշկերոյթ սարքած են: Ճռուողելով, թռչկոտելով կը կտցահարեն փշրանքները: Երբեմն իրար ալ կտցահարելով: Սիրոյ կտցահարումներով կեանքի բերկրանքը կ'ապրին անոնք: Երիտասարդ ու երջանիկ են:*

*Է՜, է՛ր երբեմն:*

*Էր երբեմն՝ ես ալ երիտասարդ էի: Յիսնամեակ մը առաջ Ափրիկէն եղաւ իմ երիտասարդական արկածախնդրութիւններուս երջանիկ թատերավայրը: Յովազներու եւ առիւծներու դէմ յանդիման ալ գտնուեցայ եւ առանց վախի ու առանց սպաննելու՝ անոնց վայրի գեղեցկութեան վրան հիանալով միայն:*

*Երիտասարդ էի:*

*Անգութ եւ անիմաստ կերպով փամփուշտ չկրակեցի անոնց վրան, սակայն, խարոյկներու շուրջ գիշերային խրախճանքներ սարքելու համար, որքան որ պէտք էր, վարազ, եղնիկ ու կաքաւ որսացի:*

*Է՜, երիտասարդ էի եւ անխուսափելիօրէն սեւ ու սպիտակ ընկերուհիներ ալ ունեցայ:*

*Իսկ հիմա՞... սա զոյգ մը թռչնիկները դիտելով, տարիներու բեռան տակ ճնշուած ու խոնաւցած յիշատակներ կ'արթննան ծեր սրտիս մէջ, անցած սէրեր՝ որոնք չեն կրնար երիտասարդացնել յոգնած սիրտս: Կեանքը ուսերուս վրայ ծանրացող բեռ մըն է կարծես: Տարեկից ընկերներէս շատեր հրաժեշտ տուին այս աշխարհին, եւ անոնցմէ իւրաքանչիւրին մեկնումին առթիւ, մանաւանդ տարիքով աւելի փոքրերու պարագային, յանցանքի զգացում մըն ալ ունեցայ:*

*Քանի մը շաբաթ առաջ մեռաւ նաեւ Սիլվա Կապուտիկեանը, անգամ մը եւս յիշեցնելով ինծի թէ մահէն խուսափիլ չկայ: Անմահութիւն ըսուածը եթէ կայ՝ ատիկա մարդու գործին մէջ է, ինչպէս Սիլվայի պարագային:*

*Եւ հիմա, ութսունամեակիս սեմին, կեանքէն չեմ կշտացած դեռ եւ նախանձով ու երանութեամբ կը դիտեմ սա կեանքով լեցուն թռչնիկները: Ես այլեւս չեմ կրնար անոնցինին նման կեանք մը ապրիլ: Եթէ տակաւին պիտի ապրիմ, գրելու պէտք է տրամադրեմ կեանքս: Աւելի ճիշդը՝ գրելն է, որ պիտի ապրեցնէ զիս: Ուրեմն, պիտի ապրիմ այնքան ատեն, որքան որ պիտի կարենամ գրել:*

*Իւրաքանչիւր յօդուածս հրատարակուած տեսնելը կը խթանէ զիս նորը գրելու եւ կը հրճուեցնէ այնպէս՝ ինչպէս երբ պարարտ վարազ մը որսացած ըլլայի, կամ խարոյկին շուրջ, բաժակը ձեռքս, ընկեր-ընկերուհիներով նստած ըլլայի:*

*Բայց մէկդի նետել պէտք է հին յուշերը, որոնց արծարծումը ծանր յուզում եւ արցունք կը պատճառէ միայն: Նոր երազներ հիւսելու եւ հետապնդելու ժամանակն ալ անցած ըլլալով, կը մնայ միայն մէկ բան՝ կարելիին հետապնդումը: Ծերի իմաստութեամբ նայիլ կեանքին ու կարելիին հաճոյքով միայն գոհանալ պէտք է:*

*Ահա, ա՛յս գիտակցութեամբ է որ անունս փոխանցեցի թոռնիկիս, հրճուելու համար օրէ օր անոր ծաղկումը դիտելով եւ սպասելով իմ չիջումիս:*

---

## ԵՐԳԻԾԱԿԱՆ
# ԱՊՈՒՆԱ ՀԱՆՆԱ

*ԱՐՄԷՆ ՏԱՏՈՒՐ*

*Ղպտի քահանայ մը կար գիւղը, փառաւոր երեւոյթով հսկայ մը՝ քաղաքավար, ժպիտը դէմքին, Ապունա Հաննա, այսինքն՝ հայր Հաննա: Գլուխէն մինչեւ ոտքին ծայրը սեւ էր, սեւ՝ փաթթոցը, մօրուքը, սքեմը, կօշիկը: Ինք սակայն լաւ տէրտէր էր, օրինակելի հոգեւորական: Պատմեմ հիացէք վրան:*

*Ծայրէ ծայր գոց գիտէր գայլի աւետարանը: Բարոյական խրատներու հեղեղ մը կը յորդէր բերնէն: Անոյշ խօսքի տոպրակ՝ իր լեզուն ոչ միայն օձը ծակէն կը հանէր, այլ եւ ծակը կը ղրկէր:*

*«Տէրը օրհնէ» կ'ըսէր անոնց որ «Օրհնեցէք Ապունա» կ'ըսէին: Ծնունդին, Զատիկին չէր մոռնար ծուխերը, միայն կը գրպանէր օրհնագինը կամ անգամ մըն ալ ոտք չէր կոխեր տունը անոնց որ իր աղօթքը անվճար կը ձգէին:*

*Ամուսնութեան կարգադրութիւն կ'ընէր պահանջքին համեմատ, եթէ Ապունա Հաննա վարձատրուէր առատ առատ:*

*Կնքելու եւ թաղելու գործն ալ կ'ընէր դերակատարի մը վարպետութեամբ:*

*Ապունա Հաննա առատ ժամանակ ունէր եկեղեցիէն դուրս, ամէն օր տուն չէր, ծնող մեռնող չկայ, անգամ իր աչքերուն համար:*

*Գիւղին ծայրը միշտ ընդարձակուող ագարակ մը ունէր Ապունա Հաննա: Ազնիւ ցեղի կովեր կը պահէր ու ամէն օր ինք իր ձեռքով կը կթէր, կը կթէր: Ազնիւ ցեղէ կովեր գտնելու եւ կաթ կթելու մէջ վարպետ էր Ապունա Հաննա: Խոտը ձրի կ'առնէր գիւղացիներէն ու դեղին ոսկի կը շինէր:*

*Եթէ մէկը ոսկի պահ տար իրեն, Ապունա Հաննա սիրով կը պահէր գանձը, այնքան լաւ կը պահէր որ տէրը անգամ մըն ալ տուածին երեսը չէր տեսներ:*

*Ապունա գիշերները կը շինէր ոսկի կամ արծաթ փոքր ձեռք, ոտք, սիրտ, խաչ, քիթ, աչք՝ մասնաւոր ապսպարանքի վրայ:*

*Տուած քարոզները գոհար խօսքեր էին, «Գանձ մի պահէք երկրի վրայ, կ'ըսէր, տուէք աղքատին, տուէք եկեղեցիին՝ երկինք փոխադրելու համար ձեր ունեցածը»:*

*Խելօք գիւղացիները կը հաւատային Ապունայի ըսածներուն եւ անոր միջոցաւ երկինք կը ճամբէին իրենց ունեցածը...:*

*«Ուխտ ըրէք, կ'ըսէր եւ պիտի բուժուիք: Եթէ ձեր ոտքը բուժուի, ոտք մը նուիրեցէք եկեղեցիին, ձեր քիթը՝ քիթ մը տուէք որպէսզի տոկոսով քիթ ստանաք երկինքի մէջ»: Ինք սակայն, խաչ մը չէր նուիրեր եկեղեցիին, քանի որ ինք իր անձը որպէս նուիրեր էր հոգեւոր առաքելութեան...»:*

*Գիւղին պակասն ալ լրացուց Ապունա Հաննա: Հայերէն «Հօրոց»ը եւ «Հայր Մեր»ը անգիր սորվեցաւ, այս ձեւով Ապունա Հաննա հայ եկեղեցիին ալ ծառայութիւն ըրաւ:*

*Հրաշալի կերպով կ'աղօթէր, Աստուած միայն գիտէ ի՞նչ կ'ըսէր: Մարդ չէր հասկնար եւ հասկնալու ալ հարկ չկար:*

*Ապունա Հաննա մէկ լեզու միայն գիտէր. ամէն մարդու հասկցած, ախորժած ու սիրած լեզուն: Իր արտասանած աղօթքն ալ ընդունելի էր այդ պատճառով:*

*Մեղաւոր էր սուրբին քով եւ «սուրբ», մեղապարտին քով:*

*Փողոցէն քալելու ատեն Ապունա Հաննան մասնաւոր կողմ չունէր:*

*Կը քալէր աջէն կամ ձախէն, երբեմն ալ ճամբուն ճիշդ մէջտեղէն: Արեւ սիրողին հետ արեւէն, շուքը սիրողին հետ՝ շուքէն: Լուսին սիրողին հետ ալ կը քալէր գիշերը:*

*Բացառիկ կարող կղերական մըն էր Ապունա Հաննան, հրաշալի էր կլլելու իր կարողութիւնը, ոչ միայն կը կլլէր, այլ եւ կը կլլեցնէր Ապուն ա Հաննան: Ու մեր խեղճերը կը հաւատային Ապունայի ըսածին եւ ըրածին: Եթէ չհաւատային ո՞վ պիտի աղօթէր ժամին մէջ, ո՞վ գանձէր իւղագինը:*

*Կը սիրէր մանաւանդ թաղելը, որ հողին մէջ ցորենի հատիկ մը ցանելու պէս բան մըն էր, անմահութեան կնիքը վրան:*

*Ապունա Հաննա չփնտռեց փառք ու պատիւ, իր եկեղեցին չգնահատեց այս պաշտօնեան արժանի կերպով որ գէթ խաչ կրելու պատիւը շնորհուի Ապունային:*

---

# ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*Գործիս եւ մասնագիտութեանս բերումով, գրեթէ ամբողջութեամբ, կարդացել եւ ուսումնասիրել եմ աշխարհի մեծ մանկագիրներին՝ Անդերսէն, Գրիմ եղբայրներ, Մարկ Տուէն, Պերօ եւ ուրիշներ:*

*Յաջող, նոյնիսկ շատ հետաքրքիր, գրաւիչ գործեր կան նրանց մօտ, որ սիրւում են երեխաների կողմից:*

*Բայց կան նաեւ անյաջող գործեր եւ անյարմար եւ նոյնիսկ վնասակար որոշ տարիքի մանուկների համար, իրենց սարսափեցնող, բացասական յոյզեր առաջացնող ֆանտազիաներով: Փաստօրէն դատելու համար յիշենք օրինակ ամբողջ աշխարհում ճանաչուած «Կարմիր Գլխարկը» (Ֆրանսացի մանկագիր Պերոյի) ուր գայլը ուտում է այդպէս կոչուած աղջնակին եւ որսորդները սպաննելով գայլին նրան հանում են «ողջ-առողջ» ինչ սարսափազդու անհեթեթութիւն մանուկ-ընթերցող համար:*

*Իսկ սարսափեցնող եւ բացասական ինչ կայ Թումանեանի մանկական գրուածքներում՝ «Զարի Վերջը», «Անբախտ Վաճառականներ, «Գառնիկ Ախպեր», «Մի Կաթիլ Մեղրը», «Շունն ու Կատուն» եւ այլն:*

*Պարոյր Սեւակը ասել է՝ «Թումանեանը եզակի է հայ գրականութեան մէջ»:*

*Իսկ ես, առանց դոյզն «Ազգային սնապարծութեան» տուրք տալու, կ'աւելացնէի՝ «Նաեւ, համաշխարհային գրականութեան մէջ»:*

*(Վերջ)*

---

# ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԸ

*Շարունակուած էջ 5-էն*

*տոլարի չափով: Հեղինակը հիացած է Ֆրանսական կառավարութեան վերաբերմունքից եւ որոշել է կիսուել իր հիացմունքով:*

*Անհրաժեշտ է կրկին նշել, որ Ֆրանսական կառավարութիւնը փոխհատուցում է կատարել մի մարդու նկատմամբ որի ծնողները հաւանաբար կարող էին ունենալ ներդրում Ֆրանսական որեւէ պանքում: Իսկ հայերը Օսմանեան Թուրքիայում զբաղուած էին երկրի առեւտրա-արդիւնաբերական տնտեսական բոլոր ասպարէզներում-գլխաւորում էին բազմաթիւ ձեռնարկութիւններ:*

*Հարցը ի հարկէ շատ բարդ է, քանի որ հասկանալի պատճառներով մեծամասնութեան մօտ նման փաստաթղթեր չեն պահպանուել, բայց նրանք, անշուշտ, կան ապահովական ընկերութիւնների արխիւներում եւ նրանց բացումը, անշուշտ կը պահանջի եւ պետութեան միջնորդութիւնը:*

*Նորից անդրադառնանք յօդուածի անուանման հարցին՝ կարող է արդեօք Թուրքիան կրկնել Գերմանիայի հումանիտար եւ ազգային սխրանքը – իր պատմութիւնը շարունակել նոր էջից եւ գնալ ազգի ինքնամաքրման, հոգապահուստում պահպանելով ճշմարտութեան ձգտումը: Քաղաքակիրթ պետութիւնների դուռը թակել որպէս լիարժէք անդամ: Անհաւատալի է, քանի որ Թուրքական մենտալիտետը, մինչեւ անգամ տեսականօրէն բացառում է նման որոշում: Բայց յոյսով լինելը եւս դիրքորոշում է:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ՀԲԸՄ 100 AGBU

Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.

**AGBU-AYA**
**Alex Manoogian Center**
**Ladies' Committee**

*Invites you to attend*

# *A Very Special Thanksgiving Dinner*

with a Musical Program

**Saturday, November 18 - 7:30PM**

AGBU ALEX MANOOGIAN CENTER
BOYAJIAN HALL
2495 E. Mountain Street
Pasadena, CA 91104

DONATION:
Adults $35
Children 12 and under $15

*RSVP by November 10, 2006*
*by calling the AGBU Alex Manoogian Center*
*(626) 794-7942*

# NEW YEAR'S EVE DINNER-DANCE

ORGANIZED BY AGBU - AYA
GLENDALE-PASADENA CHAPTER

ENTERTAINMENT & SURPRISES

**SUNDAY, DECEMBER 31, 2006**
**8:00PM**

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET
PASADENA, CA 91104

***Music by DJ Heartbeat***
***Catering by La Fogata***

Special Program and Menu for
Children in a Separate Hall

*Adults $75*
*Children 12 and under $35*
*Children 5 and under Free*

**RSVP - LIMITED SEATING**
*Call the AGBU Alex Manoogian Center*
*(626) 794-7942*

**AGBU CENTENNIAL SPONSORS**

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.
BANK of ORANGE COUNTY
BOC
A Division of Placer Sierra Bank
MEMBER FDIC
Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market
Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720

## ՄԱՐԶԱԿԱՆ

### ՇԱԽՄԱՏ

# ԱՐՈՆԵԱՆ - ՄԱՄԵԴՅԱՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՒԱՐՏՈՒԵՑ ՈՉ-ՈՔԻ

*Հայ գրոսմայստեր Լեւոն Արոնեանը Մոսկուայում ընթացող Միխայիլ Տալի շախմատային յուշամրցաշարի 2-րդ տուրում սեւերով ոչ-ոքի աւարտել պարտիան ատրպէյճանցի Շաքրիյար Մամեդյարովի հետ:*

*Բաւական երկար տեւած պարտիան աւարտուել է 68-րդ քայլին, որից յետոյ Արոնեանը Գելֆանդի եւ Մորոզեւիչի հետ 1.5-ական միաւորով սկսել է շարունակել գլխաւորել մրցաշարային աղիւսակը, քանի որ մնացած 4 պարտիաներում եւս գրանցուել է խաղաղ ելք:*




*3-րդ տուրում Սպիտակներով հանդէս եկող Արոնեանը պարտուեց Ռուսաստանի ներկայացուցիչ Պյոտր Սվիդլերին: Արոնեանը հաջող էր սկսել պարտիան, սակայն 24-րդ քայլում թոյլ տուած կոպիտ սխալի պատճառով ստիպուած էր յանձնուել:*

*Այս պարտութիւնից յետոյ Արոնեանը նահանջեց առաջին հորիզոնականից եւ այժմ գտնւում է մրցաշարային աղիւսակի միջնամասում:*

# ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 86-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԷՋ



***Երեճսերունդի ներկայացուցիչներ՝ պապիկ Սերոբ Գալթագճեան, Վազգէն Գալթագճեան եւ թոռնիկ Սերոբ Գալթագճեան մատաղը եփելու պահուն***

*Շարունակուած էջ 8-էն*

*բոլորիդ եւ Հաճընցիի թէկուզ մէկ կաթիլ արեամբ կապուած հեռու ու մօտիկ ազգականներուն եւ բարեկամներուն:*

*Պատմութեան մէջ կան էջեր, որոնց մասին երբեք անցեալ ժամանակով չի խօսուիր, քանի որ այդ իրականութիւններէն ամէն մէկուն մէջ կը դրսեւորուի ժողովուրդի ամբողջական նկարագիրը:*

*Դարասկիզբի ողբերգական յայտնի իրադարձութիւնը այդ եղելութիւններէն մէկն է, որ մեր հայոց պատմութեան մէջ ոչ միայն անջնջելի վէրք թողեց, այլ նաեւ մեր ժողովուրդի հերոսական ոգին, անոր դիմադրական կորովի եւ ստեղծագործական հանճարի արտայայտութիւնը հանդիսացաւ: Ջոհաբերութեամբ հերոսաբար կանգնեցաւ ազգի պատիւը անսասան պահելու հաստատուն կամքով»:*

*Այնուհետեւ բանախօսը հակիրճ ակնարկով մը ներկայացուց Հաճնոյ սովորութիւններուն, բարքերուն, հայրենասիրութեան, եկեղեցասիրութեան եւ 1920 թուականէն մինչեւ օրս կատարուած աշխարհի տարբեր երկիրներուն մէջ կազմակերպչական աշխատանքներուն մասին: Ան աւարտեց իր խօսքը ըսելով. «Մի փոքր ճանապարհորդութիւն կատարելով դէպի մեր արմատները, այսօր հեռաւոր մայր ցամաքի այս գեղատեսիլ քաղաքին մէջ, հոգիի կանչով թէ ճակատագրի կամքով, հանդիպած ենք մի քանի սերունդի պատկանող հաճընցիներու, մեր յուզուած սրտերու մէջ յոյս փայփայելով, որ այսպիսի հանդիպումները երբեք պիտի չաւարտին:*

*Անգամ այն մանկիկը, որ ծնած է հաճընցի ընտանիքին մէջ կամ ալ տակաւին նոր պիտի ծնի, հպարտ կեցուածքով պիտի ապացուցէ ողջ մարդկութեանը, որ արժանի է հաճընցի կոչման: Խոնարհելով գլուխս նախնիներու աճիւններու առջեւ կ'ուզեմ իմ խօսք աւարտել ըսելով՝*

*Հպարտ եմ որ, հաճընցի եմ,*<br>
*եւ նախնիներս հաճընցի են,*<br>
*եւ զաւակներս հաճընցի են,*<br>
*եւ անոնց զաւակներն ալ հաճընցի պիտի ծնին»:*

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

**Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցէով**

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

## *ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան տասնմէկերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Ֆուլիամ - Էվըրթըն | 1-0 | Մանչեսթըր Եուն. - Փորթսմութ | 3-0 |
| Չարլթըն - Մանչեսթըր Սիթի | 1-0 | Ուաթֆորտ - Միտըլզպորօ | 2-0 |
| Լիվըրփուլ - Ռիտինկ | 2-0 | Ուէսթ Համ - Արսենալ | 1-0 |
| Նիւքէսըլ - Շեֆիլտ Եուն. | 0-1 | Թոթենհամ - Չելսի | 2-1 |
| Պոլթըն - Ուիկան Աթլ. | 0-1 | Աստոն Վիլլա - Պլէքպըրն | 2-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մանչեսթըր Եունայթըտ | 11 | 9 | 1 | 1 | 26-5 | 28 |
| Չելսի | 11 | 8 | 1 | 2 | 18-6 | 25 |
| Պոլթըն | 11 | 6 | 2 | 3 | 10-9 | 20 |
| Փորթսմութ | 11 | 6 | 1 | 4 | 16-9 | 19 |
| Արսենալ | 10 | 5 | 3 | 2 | 16-6 | 18 |
| Աստոն Վիլլա | 11 | 4 | 6 | 1 | 14-9 | 18 |
| Էվըրթըն | 11 | 4 | 5 | 2 | 15-8 | 17 |

## *ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Գերմանիոյկրմանիոյ ֆութպոլի առաջնութեան տասերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Հանովըր-96 - ՎՖԼ Պոխում | 0-2 | Աախըն - Շթութկարթ | 2-4 |
| Հերթա Պերլին - Նիւրեմպըրկ | 2-1 | Վարտըր Պրէյմըն - Քոթպիւս | 1-1 |
| Վոլսպուրկ - Համպուրկ | 1-0 | Այնթ. Ֆրանքֆորթ-Մէօնշընկլատպախ | 1-0 |
| Պ. Լիվըրքուզըն – ՖՍՎ Մայնց | 1-1 | Շալքէ - Պայերն Միւնիխ | 2-2 |
| Տորթմունտ - Արմ. Պիլըֆէլտ | 1-1 | | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վարտըր Պրէյմըն | 10 | 6 | 2 | 2 | 28-12 | 20 |
| Շթութկարթ | 10 | 5 | 3 | 2 | 21-16 | 18 |
| Պայէրն Միւնիխ | 10 | 5 | 2 | 3 | 16-12 | 17 |
| Շալքէ-04 | 10 | 5 | 2 | 3 | 13-13 | 17 |
| Հերթա Պերլին | 10 | 4 | 4 | 2 | 16-12 | 16 |
| Արմինիա Պիլըֆէլտ | 10 | 4 | 3 | 3 | 17-12 | 15 |
| Քոթպիւս | 10 | 4 | 3 | 3 | 14-13 | 15 |

## *ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան տասերորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Սիենա - Փարմա | 2-2 | Աթալանթա - Ա. Սէ. Միլան | 2-0 |
| Ռեճինա - Քաթանիա | 0-1 | Թորինօ - Մեսինա | 1-1 |
| Փալերմօ - Սամտորիա | 2-0 | Ինթէր Միլան - Ասքոլի | 2-0 |
| Լիվորնօ - Ուտինեզէ | 1-0 | Քիեւօ- Քալիարի | 0-0 |
| Էմփոլի - Լացիօ | 1-1 | Ա. Էս. Ռոմա - Ֆիորենթինա | 3-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինթէր Միլան | 10 | 7 | 3 | 0 | 22-12 | 24 |
| Փալերմօ | 10 | 8 | 0 | 2 | 23-15 | 24 |
| Ա. Էս. Ռոմա | 10 | 6 | 2 | 2 | 17-7 | 20 |
| Սիենա | 10 | 4 | 5 | 1 | 12-9 | 17 |
| Աթալանթա | 10 | 4 | 4 | 2 | 16-13 | 16 |
| Լիվորնօ | 10 | 4 | 4 | 2 | 8-8 | 16 |
| Ուտինեզէ | 10 | 3 | 4 | 3 | 10-7 | 13 |

## *ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան տասներկրորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Րընէ - Լիոն | 1-0 | Վալանսիէ - Լիլ | 0-3 |
| Սոշօ - Թրուա | 1-0 | Մոնաքօ - Նիս | 0-0 |
| Սըտան - Նանթ | 1-1 | Օքսէռ - Լը Մանս | 2-3 |
| Մարսէյլ - Լօրիան | 0-1 | Նանսի - Պորտօ | 2-1 |
| Սէնթ Էթիէն - Թուլուզ | 3-0 | Փարիզ Սէն Ժերմէն - Լանս | 1-3 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լիոն | 12 | 10 | 1 | 1 | 27-9 | 31 |
| Նանսի | 12 | 6 | 4 | 2 | 12-7 | 22 |
| Լիլ | 12 | 6 | 3 | 3 | 19-12 | 21 |
| Լանս | 12 | 6 | 3 | 3 | 19-14 | 21 |
| Սոշօ | 12 | 6 | 3 | 3 | 17-15 | 21 |
| Մարսէյլ | 12 | 6 | 2 | 4 | 19-12 | 20 |
| Սէնթ Էթիէն | 12 | 6 | 2 | 4 | 19-15 | 20 |

## *ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ*

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան իներորդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Մայորքա - Աթլեթ. Մատրիտ | 0-0 | Աթլեթ. Պիլպաօ - Ռասինկ | 0-0 |
| Տեփ. Քորունա – Պարսելոնա | 1-1 | Էսփանիօ - Վալենսիա | 1-1 |
| Լեվանթէ - Ռէալ Սոսիէտ | 2-0 | Հուէլվա - Կիմնասթիք | 2-1 |
| Սարակոսա - Կեթաֆէ | 3-1 | Սեւիլլա - Օսասունա | 2-0 |
| Վիլզարէալ - Ռէալ Պեթիս | 3-2 | Ռէալ Մատրիտ - Սելթա Վիկօ | 1-2 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սեւիլլա | 9 | 7 | 0 | 2 | 19-7 | 21 |
| Պարսելոնա | 9 | 6 | 2 | 1 | 20-8 | 20 |
| Սարակոսա | 9 | 6 | 1 | 2 | 20-11 | 20 |
| Ռէալ Մատրիտ | 9 | 5 | 2 | 2 | 14-6 | 17 |
| Վալենսիա | 9 | 5 | 2 | 2 | 14-7 | 17 |
| Կեթաֆէ | 9 | 5 | 1 | 3 | 9-7 | 16 |
| Տեփօրթիւօ Քորունա | 9 | 4 | 3 | 2 | 10-8 | 15 |

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ՊՕՂՈՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Նոյեմբեր 12ի առաւօտեան ժամը 11ին, հանգուցեալի հողակոյտին վրայ Forest Lawn գերեզմանատան մէջ, որմէ ետք հոգեճաշ պիտի պատուցուի Hollywoodի Դուին ճաշարանին մէջ 5123 Sunset Blvd. Hollywood, CA:

Ցիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Խնդրողներ՝

Այրին Տիկ. Հրանուշ Գույումճեան

Մայրը՝ Տիկ. Մարի Գույումճեան

Քոյրը՝ Օր. Սօսի Գույումճեան

Քոյրը՝ Տիկ. Շաքէ Գույումճեան եւ զաւակը

Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Միսաք եւ Մարօ Գույումճեան եւ զաւակները Ռաֆֆի եւ Մայք

Տէր եւ Տիկ. Հրանդ եւ Վարդուհի Մանուկեան եւ զաւակները

Տէր եւ Տիկ. Յարութ եւ Հեռմինէ Մանուկեան եւ զաւակները

Եւ համայն Գույումճեան, Մանուկեան, Աճապահեան, Քերքութեան, Պոյաճեան եւ ազգականներն ու բարեկամները:

## ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԸ $4.5 ՄԻԼԻՈՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ ԼԻԲԱՆԱՆԻ ԲՈԼՈՐ 28 ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

Շարունակուած էջ 1-էն

Գ. Կիւլպէնկեան Վարժարան, Աբգարեան Վարժարան, Աքսոր Գասարճեան Վարժարան, Եղիշէ Մանուկեան Գոլէճ, Ռուբինեան-Սահակ Մեսրոպեան Վարժարան, Սուրէն Խանամիրեան Վարժարան, Նուպարեան-Խրիմեան Վարժարան, եւ Ս. Քառասնից Մանկանց Վարժարան:

Եօթը Աւետարանական դպրոցներ՝ Կեդրոնական Բարձրագոյն Վարժարան, Կերթմէնեան Վարժարան, Այնճարի Երկրորդական Վարժարան, Թորոսեան Վարժարան, Հայ Աւետարանական Գոլէճ, Շամլեան-Թաթիկեան Վարժարան եւ Թրատի Վարժարան:

Վեց Կաթողիկէ դպրոցներ՝ Հարպոյեան Վարժարան, Մխիթարեան Վարժարան, Այնճարի Քոյրերու Վարժարան, Մեսրոպեան Վարժարան, Սրբուհի Ագնէս Վարժարան, եւ Սրբոց Հռիփսիմեանց Վարժարան:

Երեք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան դպրոցներ՝ Կարմիրեան Վարժարան, Դարուհի-Յովակիմեան Վարժարան, եւ Նազարեան Վարժարան:

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան:

Թէքէեան Մշակութային Միութեան Վահան Թէքէեան Վարժարան:

Հայ Կրթական Բարեսիրական Միութեան Սահակեան-Լ. Մկրտիչեան Գոլէճ:

«4.5 միլիոնի այս աննախընթաց նպաստը մեծաւ մասամբ պիտի փարատէ հայկական վարժարաններու նիւթական ծանր բեռը, որ մնացած էր տագնապահար լիբանանահայ համայնքի ուսերուն», յայտնեց Սասունեան. «Աշխարհատարած հայութիւնը պէտք է օգնութեան ձեռք երկարէ այս կենսական համայնքին, որ օժանդակութեան կը կարօտի բազմաթիւ այլ մարզերու մէջ եւս: Հայ ժողովուրդի ապագայի կարեւորագոյն երաշխիքներէն է յաջորդ սերունդի կրթութիւնը: Այսօր նեցուկ կանգնելով հայկական վարժարաններուն, մենք ներդրում կատարած կ'ըլլանք հայ մշակոյթի ոչ միայն գոյատեւման, այլ զարգացման մէջ»:

1989էն ի վեր, Միացեալ Հայկական Ֆոնտը 140 թռիչքներով եւ 1,359 ծովային արկղներով $447 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:

## ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

**Փաստատիննայի մէջ հաստատութիւն մը կարիքը ունի աշխատաւորուհիներու cash register-ի վրայ:**

**Հեռաձայն՝ (626) 833-2331:**

Massis Weekly on the Internet

www.massisweekly.com

## ԼՐԱՑԱՒ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ 99-ԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 6-էն

գուցէ միակ առաւելութիւնն այն է, որ թէեւ փոքր, բայց այդ նոյն զանգուածն է, որ ամէնուրեք թթխմոր է հանդիսանում հայկական կեանքի համար: Նոյնիսկ, ըստ երեւոյթին, բացառութիւն չէ նաեւ Հայաստանը:

Հետեւաբար, միակ յոյսը այն է, որ աշխարհի բոլոր քաղաքների հայկական լրատուամիջոցները համացանցի եւ արբանեակների միջոցով մատչելի լինեն աշխարհի բոլոր կողմերի հայութեան համար: Սա մեծ աշխատանք է ենթադրում այսօրուայ պայմաններում եւ ափսոս, որ դեռեւս նոյնիսկ չկան համապատասխան նախադրեալներ: Ցամենայն դէպս, այս սկզբունքի հիման վրայ «Ժամանակ»-ը մասնակցում է հայ մամուլի գործակցութեան վերաբերեալ բոլոր որոնումներին, ջանքերին:

Այսքանից յետոյ, դարադարձի ճանապարհին ցանկանում ենք նշել, որ հնարաւորութեան սահմաններում ամէն ինչ կ'անենք, որպէսզի յոբելեանական մօտալուտ շրջանը վերածենք վերարժեւորման ժամանակահատուածի եւ մնայուն գործերի չարժառիթի: Այժմ դժուար է կանխատեսել այս մտադրութեան, պատրաստակամութեան գործնական համեմատութիւնը... Կան մշակուած ծրագրեր, բայց տեսնենք...

Սփիւռքում (եւ ընդհանրապէս) հայերէն թերթ հրատարակելը ամէն ինչից առաջ պայմանաւորուած է առկայ վիճակից չգանգատելով: Մամուլը թէեւ ընդունւում է որպէս հայապահպանման գլխաւոր կռուաններից մէկը, սակայն գաղտնիք չէ, որ միեւնոյն ժամանակ ենթարկւում է անմենադաժան վերաբերմունքի՝ բոլոր առումներով: Արդ, այսօր չենք ցանկանում բողոքել: Առհասարակ ցանկութիւն չունենք անդրադառնալու այն անտանելի պայմաններին, որոնք բազմապատկում են լրագրական ասպարէզի ընթացիկ դժուարութիւնները եւ յաւելեալ խոչընդոտներ յարուցում մեր առաքելութեան համար:

Ո՛չ հայկական արժէքների հանդէպ համատարած անտարբերութիւնը, ոչ էլ մեր լեզուի ու մշակոյթի հանդէպ թշնամութեան, ատելութեան հասած վերաբերմունքը հոգ չեն այսօր: Դեռ չենք խօսում այդ ամօթալի եւ տխրահռչակ շրջափակման մասին, որ 109 օր ի վեր պարտադրւում է թերթին՝ ուղղակիօրէն եւ բացայայտօրէն սպառնալով նրա գոյութեանը, բայց եւ այնպէս ակամայ մերկացնելով նաեւ հեղինակների սնանկութիւնը:

Արդարեւ, այս բոլոր դառնութիւնները համտեսում ենք ամէն օր, ամենածայրայեղ դրսեւորումներով: Որովհետեւ գիտենք, որ այն, ինչ պէտք է անենք, կ'անենք այդ ամէնով հանդերձ: Եւ այն, ինչ չենք կարողանալու անել, դա էլ կը դատի պատմութիւնը:

Մենք հպարտ ենք, որ թերթ ենք հրատարակում հայ ընթերցողի համար: Հայ լրագրողը սիրահարն է իր ասպարէզի եւ իր հարազատ ժողովրդի: Բայց այդ սէրը դժուար է, երբեմն անփոխադարձ: Մենք սիրում ենք թէ՛ մեր համակիրներին, եւ թէ՛ հակակիրներին: Չէ՞ որ Արագոնն արդէն ասել է, որ չկայ երջանիկ սէր... Մեր լուծը թեթեւանում է միայն «երազ» ժողովրդին ծառայելու գիտակցութեամբ, զգացումով:

Տարեդարձի օրով, բիւր երախտագիտութեամբ վերյիշում ենք թերթի անմահ հիմնադիրներին՝ Միսաք եւ Սարգիս Գոչունեան ողբացեալ եղբայրներին, նաեւ բոլոր նրանց, որոնք իրենց հետ կերտեցին 1908 թուականի Հոկտեմբերի 28-ը:

Յարգանքով ոգեկոչում ենք Մարտիրոս, Մելիք եւ Արա Գոչունեան հոգելոյս եղբայրներին, որոնք տասնամեակներ շարունակ անփոխարինելի նպաստ ունեցան «Ժամանակ»-ի յարատեւութեան մէջ:

Չենք կարող մոռանալ մեր ամենասիրելի խմբագիր՝ ողբացեալ Լիլի Գոչին, որի ժառանգած սիրոյ, նուիրումի եւ զոհողութեան ոգին այսօր անսպառ է պահում մեր եռանդը:

Տարեդարձի օրուայ մեր անմիջական խոհերի մէջ են «Ժամանակ»-ի բոլոր ողբացեալ խմբագիրները, տնօրէնները, աշխատակիցները, լուսանկարիչները, գծանկարիչները, վարչայինները, տեխնիկական ոլորտի աշխատակիցները, գրաշարները, մեքենավարներն ու ցրուիչները, որոնց վաստակը տասնամեակ ներ շարունակ կազմեց փառաւոր մի ամբողջ եւ «Ժամանակ» օրաթերթը գոյատեւեց անընդհատ:

Վերջապէս, մեր պարտքն է խօսք ուղղել «Ժամանակ»-ի թանկագին ու սիրեցեալ ընթերցողներին: Բաւական է ասել, որ եթէ նրանք չլինէին, այսօր չէր լինի այս թերթը: Նրանք հիմնադրութեան իսկ օրից տէր կանգնեցին այս թերթին եւ «Ժամանակ»-ի հետ այնպիսի ջերմ յարաբերութիւն պահեցին, որ իրենց հաւաքական զգայնութիւնները նոյնացան այս թերթի արժէքային համակարգի հետ ու փոխադարձաբար: Չէ՞ որ, հայ մամուլի ընթերցող լինելը հայ մարդու ինքնութեան տեւականացման ջիղի, բնագդի մաս է կազմում...

Ընթերցողների հետ նման հաղորդակցութիւնը այսօր մնում է «Ժամանակ» օրաթերթի միակ ապաւէնը, երաշխիքը, յենարանը եւ ապագայի նկատմամբ յոյսը:

Համոզուած ենք, որ այս հաղորդակցութիւնն է, որ պիտի կերտի 2008թ. Հոկտեմբերի 28-ը»:

Jessica Demirdjian
REALTOR®

Prudential

California Realty
9878 Hibert Street
San Diego, CA 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com
An independently owned and operated member of Prudential Real Estate Affiliates, Inc.

Հայաստան Համահայկական Հիմնադրամ
9-րդ Միջազգային Թելեթոն

I  Armenia

Գոհաբանութեան Օր
Նոյեմբեր 23, 2006
KSCI-LA18 8am-8pm pst

Տեղեկութեան համար հեռաձայնել 1 800 888 8897
Կայքէջ www.armeniafund.org
ArmeniaFund

© 2006 Armenia Fund. All rights reserved.